

2816

Ն. ՊՈՂՈՐՈՒԺՆԵՑ



ԼԵՀԱԿԱՆ ԻՆՏԵՐՎԵՆՏՆԵՐԻ  
ԶԱԻՉԱԽՈՒՄԸ  
ՄՈՍԿՎԱՅԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ  
XVII ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

9(47)  
Դ-74

ՄԱԿԱԳԱՐԱԳԱՅԻ ՊՐԱՏԻՎՈՒՅԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ 1939 թվականի բարեկարգություն

86064, Ա. Ն.

1939

24 JAN 2006

30 MAY 2011

ՀԵՍՈՅ ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

9(47)

Դ-74

ԱՐ

Ն.ՊՈՂՈՐՈՇՆԵՑ

# ԼԵՐԱԿԱՆ ԻՆՏԵՐՎԵՆՏՆԵՐԻ ԶԱԽԶԱԽԱՆՈՒՄԸ

ՄՈՍԿՎԱՑԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ  
XVII ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

22 JUL 1913

166

Ն. ՊՐԻՎԱՏԻՑՅԱՆ

Լեհական թմունքների զախշայումը Մոսկվայի պետարքան մեջ XVII  
դարի սկզբին:

Դիրքը նվիրված է ոռուական մեծ ժողովրդի հերոսական անցյալի  
ամենափայտան հջերից մեկն՝ իր յերկրի ամբողջականության ու անկախու-  
թյան համար նրա մզած հաղթական պայքարին ընդդեմ լեհական ինտերվենա-  
ների, վրոնք խայտառակաբար վրադիմեցին ոռուական հողերի տերիտորիայից:

Դրամամ արգում և XVII դարի սկզբի Մոսկվյան պետաթյան ականա-  
գոր գործիչների՝ Բոլտանիկովի, Մինինի և Շամարոկի բնութագիրը:

Դիրքն ի նկատի յի առնված ընթերցող լույս շրջանների համար:



2604  
39

Խմբագիր՝ Խ. ԴԱՆԻԵԼՅԱՆ  
Թարգմ. ԿՈՒՄԿՈՒՄԱԶՅԱՆ  
Տեխ. խմբ. Խ. ԽԱՉՈՍՅԱՆ  
Սրբագրիչ՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ  
Գլավիտի լեազոր՝ Կ.—2511 Պատվեր № 136, Տիրաժ 1000  
Հանձնված է արտադրության 20 մարտի 1939 թ.  
Ստորագրված է ապագրելու 1 ապրիլի 1939 թ.

Մանկավարժական Բնութառութիւն ապարան, Մարքսի փող. № 17, Յեղան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇՐՋԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՍԿՈՎՅԱՆ  
ԹԵՏՈՒԹՅԱՆ ՄԵջ XVI ԴԱՐԻ ՎԵՐՋՈՒՄ ՅԵՎ  
XVII ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

XVI Դարի վերջերին Մոսկվայի շուրջը նույսիայի հավաք-  
ման յերկարատև պրոցեսը հաջող կերպով ավարտված եր: Մոսկվայի պետությունն աճեց, դարձավ մեծ և ուժեղ տերու-  
թյուն, վորին պետք է հաշվի առնելին հարեանները և վորի  
ամրությունն իրենց վրա զգում ելին նրա թշնամիները: Մակայն,  
Մոսկվայի շուրջը նույսիայի հավաքումն առաջացրեց մի շարք  
ներքին հակասություններ, վոր խիստ սրվեցին XVI դարի վեր-  
ջերին: Դրանց պատճառը հանդիսանում եր հետեւյալը:

Առանձին անկախ իշխանությունների՝ բաժնեկարգվածքների  
վոչնչացումով նրանց տերերը, վոր միայն նոմինալ կերպով  
կախում ունելին Մոսկվյան մեծ իշխանից, ֆեոդալ-տիրապետ-  
ներից զառնում ելին մեծ իշխանի ծառաները, նրանք ստիպ-  
ված ելին իրենց բաժնեկարգվածքներից տեղափոխվել Մոսկվա  
և այստեղ ծառայության մանել մոսկովյան թագավորի մոտ:  
Իշխանները նեղվում ելին այդ կախումից, նրանք ամեն տեսակ  
արգելվներ ելին հարուցում մոսկովյան թագավորի վեմ՝ Մոսկ-  
վայի շուրջը նույսիան համախմբելուն վերաբերող նրա ձգում-  
ների գեմ:

Բայց այդ համախմբումը թելագրվում եր ոռւս ժողովրդի  
շահերով, վորն անցյալում խիստ տառապում եր նույսիայի մաս-  
նատումից և իշխանների յերկարակություններից: Մասնատված  
նույսիան հեշտ ավար եր ներկայացնում թշնամի՝ հարեանների  
համար: XIII դարում նա նվաճվեց մոնղոլ-թաթարների կողմից.  
XIV դարի վերջում թաթարներից ազատվելու հաջող փորձ կա-  
տարեց Կուլիկովո զաշտի ճակատամարտում՝ իր ուժերը համա-  
խմբելով Մոսկվայի մեծ իշխանի հիմնական ուժերի շուրջը:

Մոսկվայի թագավորի հաղթանակն իշխանի կների վրա և  
նրանց բաժնեկալվածքային (ստուգականությունների  
ջախջախումը վորոշ քայլ ելին զեպի առաջ Մոսկովյան պետու-  
թյան հետագա ուժեղացման ճանապարհին:

Իշխանի կների ջախջախումը կատարեց մոսկովյան թագա-  
վոր իվան Աձեղը, վորը նախկին տիրակալող իշխանների հետ-  
նորդների վորում տակից դուրս մղեց նրանց հզորության հիմ-  
նական բաղան՝ հողերի տիրապետությունը:

Աձեղը Մոսկվայի պետությունը բաժանեց յերկու մասի՝  
կենտրոնականը — ուղրիչնինան, վորի հողերը տվեց իր հավա-  
տարիմ ծառաներին, մանրակալվածքավոր ազնվականությանը,  
և ծայրամասայինը — դեմքնան, վորտեղ մեծ մասամբ բնակեց-  
վեցին իրենց տիրապետություններից զրկված, ուղղողիցուն կեր-  
պով տրամադրված և մոլովյան թագավորի կողմից նուսիան  
հավաքելու քաղաքականության ղեմ արգելքներ հարուցող տիրա-  
կալող իշխանների սերունդները, այսինքն՝ մեծատոհմիկ իշխան-  
ները և բոյարները:

Այդ իշխանների և բոյարների կողմից զիմագրության  
ամեն տեսակի փորձերը, մոսկովյան թագավորի քաղաքակա-  
նության նկատմամբ նրանց անբավականության յուրաքան-  
չյուր արտահայտությունը խափանվում և պատժվում ելին  
Աձեղի կորուկ միջոցառումներով: Բավական իշխաններ ու  
բոյարներ այդ ժամանակ զրկվեցին իրենց գլուխներից, պաշտ-  
պանելով ին սովորութները: Նրանցից վոչ քչերը տուժեցին  
զանազան հեռավոր վանքերում բանտարկելությամբ և աքսորով:

Իշխանաւոյարական ուղղողիցիան ժամանակավորապես ճընշ-  
վեց. իշխանների և բոյարների կողմից էին սովորույթը վերա-  
կանգնելու փորձերը վերջացան կրախով: Հաղթեց մոսկովյան թա-  
գավորը, վորի այդ պայքարում նմնվում եր ամբողջ սուս ժողո-  
վըրդի համակրության վրա. բայց անվնաս պրծած և նոր իրա-  
գրությանը հարմարված էին բոյարությունը չեր կարողանում  
ներել մոսկովյան թագավորին այդպիսի հաղթանակի համար.  
Նա առիթի յեր սպասում վերապարճներու իրեն այն, ինչ վոր

Աձեղի սեփորմներով վոչ լրիվ չափով ապահովված եր նաև  
մանրակալվածքավոր ազնվականությունը, վոր ուղրիչնիկների

ագահ բազմությամբ թափիկ եր նախկին տիրակալող իշխան-  
ների և բոյարների ավելիքած կալվածները Մանրակալվածքավոր  
ազնվականներն ստանալով բոյարների հողերը, պարտավորվում  
եյին մոսկովյան թագավորին իրենց ծառայությամբ, ամենից  
առաջ զինվորական: Մոսկվայի պետության հզորությունն ավելա-  
նում եր ուղղմական մարդկանց թվի աճման հետ զոգընթացա-  
րար: Մոսկվայի թագավորը շահագրգոված եր, վոր այդպիսի  
մարդկանց թիվը շատ լինի, վորոնք պատերազմի ժամանակ  
պետք և ներկայանային ռձիով, մարդով և զենքով: Այդ պատ-  
ճառով ել նա սախաված եր մեծատոհմիկ իշխաններից և բոյար-  
ներից կրված հողերը բաժանել կարելույն չափ ավելի մեծ թվով  
ազնվականների, վորի հետևանքով նրանց տիրապետություն-  
ներն ավելի մանրանում եյին և այդպիսով ավելի քիչ յեկա-  
մըտաքեր եյին գառնում:

Մշական պատերազմներն ու արշավանքները, վոր պետու-  
թյունից մեծ միջոցներ և ջանքեր եյին պահանջում, ծանը կիր-  
պով եյին անդրադառնում ծառայող ազնվականության զրու-  
թյան վրա: Փոքրիկ կալվածքները, վոր ազնվականներն ստա-  
նում եյին իրենց ծառայության համար, մեծ ծախսերը, վոր  
կապված եյին մշտական պատերազմների հետ, նոր հողերի վրա  
ավելի շուտով հարստանալու տեսչը — այդ ամենը ազնվական-  
ների մեջ առաջացնում եր զժողուության զգացմունք և նրանց  
գրդում եր ուժեղացնելու իրենց գյուղացիների շահագրծումը:  
Գյուղացիները, չոփմանալով այդպիսի շահագրծման, հեռանում  
եյին մանրակալվածքավոր ազնվականներից: Ազնվականները,  
վոր ավելի ևս աղքատացել եյին այդպիսի հեռացումներից, պա-  
հանջում եյին իրենց մոտ յեղած գյուղացիներին ճորտացնելի և  
ամեն անգամ նոր պատերազմի և արշավանքի սկզբում գանգատ-  
վում եյին թագավորին իրենց զրության զժվարության մասին և  
թագավորական ծառայություն կատարելն իրենց համար ան-  
հարիւթի լինելու մասին:

Բայց և այնպիս Մոսկվայի պետության մեջ ամենից ա-  
վելի անբավական և խնամազուրկ եյին մնում գյուղացիները,  
վորոնց գրությունն ավելի և ծանրանում եր՝ շնորհիվ մանրա-  
կալվածքավոր ազնվականության զերի ուժեղացման: Եատ գյու-  
ղացիներ փախչում եյին իրենց կալվածատերի ճնշումից զեպի

պետության ծայրամասերը, տափաստանները, այնտեղ կադմում  
եյին կազակական ջոկատներ և ամբողջ բնակավայրեր: Փախած  
գյուղացիները Մոսկվայի պետության մեջ ամենից ավելի գյու-  
րավառ նյութն եյին, նրանք չափազանց թշնամաբար եյին արա-  
մադրված դեպի մոսկվյան կարգերն ու իշխող գասակարգերը:

Բայց նեղվելով Մոսկվայի պետության մեջ գոյություն ու-  
նեցող տնտեսական ու քաղաքական ճնշումից, սակայն, զյուղա-  
ցիական լայն մասսաներն իրենց հոնյակերը դնում եյին մոսկվ-  
յան թագավորի վրա, վորը, ըստ նրանց ունեցած պատկերաց-  
ման, ամբողջ ուսւ ժողովրդի հայրն եր ու պաշտպանը և մե-  
նակ կարող եր բարելավիել գյուղացիության ծանր դրությունը:

Այսպիսով, Մոսկվայում կային յիրեք հասարակական խմբեր,  
վոր գժգոհ եյին գոյություն ունեցող իրակարգից: Կալվածատերերի  
դասակարգն ու զյուղացիների դասակարգը կանգնած եյին իրար  
դիմաց, նրանց փոխադարձ հակասություններն անհաշտ եյին:  
Բայց կարգածատերերի դասակարգի ներսումն ել կային պայքա-  
րող խմբեր, այն ե՝ մեծագարմ բոյարությունը, վոր փորձում եր  
սահմանափակել ցարական իշխանությունը, և մանրակալված-  
քավոր ազնվականությանը, վորը գուրս եր գալիս վորպես  
պաշտպան մոսկովյան թագավորի անսահմանափակ ինքնակա-  
րության և ընդդեմ բոյարական ոլիգարխիայի: Տվյալ ետապում  
նրանց հակասությունները խիստ սրված եյին, բացահայտ դա-  
սակարգային պայքար եր գնում. առանձին դեպքերում այս  
կամ այն կալվածատիրական խումբն աշխատում եր այդ պայ-  
քարում գյուղացիությանն ողտագործել իր կողմում:

Մոսկվայի պետության կառավարման մեջ ազնվականությունը  
շատ աչքի ընկնող դեր եր խաղում: Գյուղացիությունը ներկա-  
յացնում եր ազգարնակության ճնշող մասսան: Պետության  
ներքին բարդությունները (պատերազմներ, տարերային աղետ-  
ներ և այլն) ծանր ճնշումով ընկնում եյին գյուղացիների վրա  
և նրանց ու ազնվականության միջև դասակարգային հակասու-  
թյունների սրում եյին առաջացնում: Գյուղացիությունն այդ-  
պիսի մոմենտներում ավելի խիստ կերպով եր զգում ազնվական  
շահագործման լուծը և ավելի ուժեղ կերպով ձգտում եր աղատ-  
վել նրանից, իսկ ազնվականությունն այդ գեղքերում ճիգ եր  
թափում, վորպեսի պահպանի իր դասակարգային գիրքերը և

իրենից կախված ամեն ինչ անում եր, վոր իր կողմից որինակըը-  
ված շահագործումը գյուղացիների նկատմամբ վոչ միայն պահ-  
պանվի, այլ և ավելանա:

Այդ ամենն ուժեղացնում եր գասակարգային պայքարը  
և բարգացնում եր քաղաքական շրջողը թյունը Մոսկվայի  
պետության մեջ:

XVII. գարի սկզբը նշված և այսպիսի բարդացումով:

Բորիս Գոդունովի (գահ նստեց 1598 թվին) թագավորու-  
թյան առաջին բարեհաջող տարիներից հետո՝ 1601 և 1602 թվե-  
րին Մոսկվայի պետության մեջ սարսափելի սով յեղափ: Հացի  
գներն արտասովոր կերպով բարձրացան: Մովի հետ կալված  
աղքատությունն ու ծայրահեղ զրկանքները հարվածեցին բնակ-  
չության լայն մասսաները: Ժողովուրդը հազարներով մեռնում  
եր, չքավորներն ուտում եյին մղեղ, ծառի կեղե, կատուներ,  
շներ և ամեն տեսակի գեց: Նշվել են մարդակերության գեղքեր:

Ժողովրդական աղետի այդ ծանր տարիներին ազնվականներից  
շատելը, այն ել նորյանիսկ հարուստներն ու անվանիները, վոր-  
պեսզի կրծատեն ուտող բերանների թիվն իրենց կալվածքնե-  
րում, իրենց մոտից վանդում եյին իրենց գյուղացիներին,  
ութանով հենց ավելացնելով սովորյաների և անապաստանների  
թիվը:

Սովն ավելի քիչ չափերով կավալ Մոսկովյան պետության  
հարավային ծայրամասերին՝ Կուրսկի և Սեմերսկի յիրկրներին  
(Բրյանսկ քաղաքից հարավ ընկած շրջանը): Մոսկովյան պե-  
տությունից մասսայաբար այնտեղ եյին մեկնում փախածները,  
վորոնք իրենց աղատում եյին սովից և կալվածատիրական ճյն-  
շումից:

Սովը ծայրահեղորեն սրից գասակարգային հակասություն-  
ները Մոսկվայի պետության մեջ. նա ավելի խիստ կերպով հա-  
կադրեց գյուղացիներին կալվածատիրերի գեմ, ազնվականներ-  
վածատերերին՝ անվանի մեծատոհմիկ բոյարության գեմ: Վոր  
ավելի քիչ եր տուժել ծանր սովի տարիների հետեանքներից,  
և, վերջապես, այդ բոյարներին հակարգեց մոսկովյան թագավո-  
րի՝ Բորիս Գոդունովի գեմ:

Բոյարները Գոդունովին՝ համարում եյին ազնվականու-  
թյան թագավոր: Գոդունովին ողբիչներից եր և Մոսկովյան

պետության կառավարման ասպարիզում ինքնակալությունն ամրացնելու տեսակետից Ահեղի քաղաքականությունն երանց կացնում: Մեծազարմ բոյարությունն ատում եր Գողունովին: Բոյարությունը ժողովրդի մեջ լուրեր եր տարածում, թե բոլոր թշգառությունների մեղավորը Դողունովն ե, վոր ապօրինի կերպով զավթել և թագավորական գահը և նրան համանելու համար սպանել և այդ գահի որինական թագաժառանգին՝ հվան Ահեղի վորդի Դմիտրիին: Դմիտրին, վոր իր մոր հետ ապօրում եր Ռեզիչ քաղաքում, դեռ մինչև Դողունովի գահ բարձրանալը մեռավ կամ սպանվեց: Այդ գործի հետաքննությունը վորոշակի վոչինչ չտվեց, և բոյարությանը ձեռնտու յեր ժողովրդի մեջ տարածել այդ վերսիան, թե ժողովրդի թշգառությունն առաջանում ե ի պատիժ Բորիսի՝ արքայորդի Դմիտրիի սպանության համար:

## ԱՌԱՋԻՆ ԼԵՂԱԿԱՆ ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱՆ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵջ

Մոսկովյան պետության մեջ ծագած զժվարություններից վճռեցին ոգտվել ուսու ժողովրդի յերդվյալ թշնամիները՝ լեհական պաները: Մասկվայի գեմնրանց վարած յմրկարտուն պատերազմում (XVI դարի վերջում, հվան Ահեղի ժամանակ) լեհերին չհաջողվեց նվաճել ուստական հողը: Լեհական թագավոր Ստեփան Բատորիի ղորքերը չարաչար պարագեցին թե Պոլոցկի և թե Պոկովի մոտ:

Լեհական տիրակալող մագնատ իշխան Վիշնեվեցին այդ պատերազմում յերեք անգամ ավերել եր Մոսկովյան պետության ծարագ-արեգմույն ծայրամասի յերկրները (Զելնիկովը, Նովգորոդ-Եվելերսկին, Ստարոդուբը) և 1581 թվին Սուրենստի գետի վրայի ճակատամարտում արժանի դաս ստացավ Մոսկովյան դորքերից, վորոնք նրան հալածեցին Տրուքչեվսկ քաղաքը նրա կողմից ավելի լուց հետո:

Հհամարձակվելով բացարձակորեն դուրս գալ Մոսկովյայի դեմ, պաները դիմեցին իրենց պրակտիկայում փորձված ինքնակոչության մեթոդին:

Լեհական պաներն այդ մեթոդը լայնորեն գործադրում

ելին մոլովավական հոսպողարության հավակնորդներին առաջ քաշելու վերաբերմամբ (հոսպողարը մոլովավական տիրակալող իշխան ե):

Մոլովավական կիստանկախ պետությունը XVI դարի կեսից գառնում և ամեն տեսակի բախտախինդիրների պայքարի ասպարեզ, վորոնք իրենց հաչակում ելին վորպես նախկին մոլովավական հոսպողարների ժառանգությանը:



I  
Հայութական պատության մասին պատմություն

Կարձ ժամանակի ընթացքում (XVI դարի կեսին և վերջին) յի շարք ինքնակոչշախտախնդիրներ լեհական և լյախական ստորին գնեպրյան կազակների ոգնությամբ իրենց իրավունքներն ելին ներկայացնում այդ հոսպողարության նկատմամբ: Լեհական մեծազարմ ընտանիքներն ոժանդակում ելին այս կամ այն հավակնորդներին, վորչափով վոր այդ շահավետ եր նրանց:

Ագտագործելով Մոսկվայի պետության դժվարությունները, լինական պահելու վճռեցին զիմել Մոլգավայում բայորին վարձը ձբած իրենց այդ միջոցին: Վիշնևկեցիները, վար անցյալում շատ անգամ եյին կողոպտել ու ավերել ուռուսկան յերկրները, շատ անգամ եյին պաշտպանել զանտղան խաքերաների՝ մոլլավական հոսպողարության թեկնածուների անվան տակը հանձինս առաջին ինքնակոչի զուրս բերին նաև Մոսկվյան դահի հավակնորդին:

Նրանցից մեկի, չկիտես՝ Ազամի, թի կոնստանտինի, կալվածքում առաջին անգամ յերկաց այն ժարդը, վորս իրեն հայտարարեց իգան Անեկ թագավորի կինդանի մտացած վորդի՝ Դմիտրի: Վիշնևկեցիներից մեկը՝ Կոնստանտին ամուսնացած եր Սանգոմիրի Վոնվորա Մնիշեկի աղջկա նաև իրեն Դմիտրի անվանող մարդը ներկայացվեց այդ Վոնվորային, վորը Լինաստանում հայտնի յեր փարթամ ապրելակերպով և հսկայական պարտքերով: Մնիշեկը կարավ ինքնակոչից, վորպես մի միջոցի, վորը կարող է շտկել նրա անձնական գործերը: Նա ինքնակոչի հետ պայմանավորվեց նրան տալու իր աղջկան՝ Մարինային, յեթե նա դառնա Մոսկվյան թագավոր: Ապագա «թագավորը» պարտավորվեց զրա համար առատաձեռնորեն պարզեստրել Մնիշեկներին և Վիշնևկեցիներին: Մարինային, իր ապագա կոնջը, նա խոստացավ նվիրել ուռուսկան յերկու քաղաք՝ Նովգորոդն ու Պոկովը գալառոներով միասին, իսկ աներոջը՝ Մնիշեկին խոստացավ միանվագ տալ 200.000 լինական զլոտի նրա պարտքերը վճարելու համար:

Վիշնևկեցիներն ու Մնիշեկը թուղթ են ուղարկում Լինաստանի զանագան կողմերը՝ կոչ անելով Այախտային ժամել ինքնակոչի զորքերի մեջ: Պաներից նրանք, վորոնց աշքին յերեւմ եր ապագայում Մոսկվյան պետության նվաճումը և ուռուսկան յերկրների սահմաններում տիրակալելը, հոժարությամբ բերում եյին իրենց ջոկատներն ապագա Մոսկվյան «ցարի» զրոշների տակ: Ինքնակոչի բանականեղը յեկած պաների հետ մեկտեղ՝ այնակ յեկան նաև ճիզվիտները, վորոնք ձգտում եյին նոր յերակը կըրներ միացնել կաթոլիկ յեկեղեցաւն և զրանք յենթարկել չումի պապին:

Ինքնակոչի զորքն ավելանում եր բախտախնդիրը տար-

բերով, վորոնք զեպի Մոսկվա արշավելու մեջ տեսնում եյին իրենց ոգուածի աղբյուրը: Լինական պահերն ամբողջապես զուրս յեկան Մոսկվայի դեմ:

Ինքնակոչի տերերն ու վողեշնչողները - պնդում են, վոր նա ավելի շուտով անցնի լինական սահմանը և նրա զորքերը խուժեն Մոսկվյան պետության սահմանները:

1604 թվի հոկտեմբերին կեղծ-Դմիտրին անցավ Մոսկվյան պետության սահմանը: Սահմանագլւխի քաղաքները, վոր թույլ կայալորներ ունեյին, չկարողացան լուրջ զիմադրություն ցույց տալ նրան և առանց կովի անձնատուր եյին լինում ինքնակոչին: Լուրջ զիմադրություն ցույց տվեց միայն նովգորոդ Սեվերսկի քաղաքը:

Ինքնակոչի յերեվալու լուրն սկզբում մեծ անհանգստություն չպատճառեց Բորիս Գոդունովին: Նա ինքնակոչի ուժերն անբավարար եր համարում Մոսկվայի դեմ պայքարելու համար, իսկ ինքնակոչության հերյուրանքը՝ վողորմելի արկածախընդություն: Սակայն բոյարներն այլ կերպ եյին նայում ինքնակոչի վրա, Նրանք վոչ տունց հիմքի նրա մեջ տեսնում եյին մի միջոց, վորով կարող եյին պայքարել Գոդունովի զեմ, տապալել նրան մոսկվյան թագավորների գահից և իշխանությունը վերցնել իրենց ձեռքը:

Մոսկվյան զորքերի հրամանատար վոեվոդաները (զորապետներ—Ծ. Թ.) վոր սովորաբար բոյարական ավագանիների ներկայացուցիչներն եյին, դավաճանորնեն անցնում եյին ինքնակոչի կողմը և թույլ եյին տալիս նրան իր ջոկատներով հեշտ կերպով շարժվել զեպի Մոսկվա:

Ինքնակոչի հրովարտակներով խարված գյուղացիները շատ տեղերում հավատացին նոր «իսկական» թագավորի ճշմարիտ լինելուն, վորից նրանք սպասում եյին իրենց ծանր վիճակի բարելավում, և նույնական խմբերով անցնում եյին նրա կողմը:

Վատանքը, վոր սկզբում Գոդունովին թվում եր թույլ ու աննշան, ամեց, դարձավ նրա համար սպառնալի և բացառիկ Բոյարների գավաճանությունը յերերացը նրա գահը և Բորիսի առջե զրեց կյանքի և մահվան ճակատագրական հարցը:

Մոսկվայի պետության մեջ ծայրանեղորին լարված զրության այդ հանդամանքներում 1605 թվի ապրիլին Բորիսն անսպասելիո-

բեն մեռավ: Դահ բարձրացավ նըս 16 տարեկան՝ վորդի՝ Ֆյոդոր: Մոսկովյան պետության մեջ տարբնթացությունն ավելացավ: Կեղծ-Դմիտրիի կողմն անցավ Բորիսի թագավորության ամենաւլավ վուլուս և զորավար Պյոտր Բասմանովը: Նույն 1605 թվի հունիսին Կեղծ-Դմիտրին արգին Մոսկվայումն եր. այստեղ նրան հոչակեցին Մոսկովյան թագավոր, իսկ Գոդունովի վորդուն՝ Ֆյոդորին խեղդամաճ արին Կեղծ-Դմիտրիի աղենաները:

## ԼԵԶԵՐԻ ՏԻՐԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ: ՄՈՍԿՎԱՅԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՊՍԱՄՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԼԵԶԵՐԻ ԴԵՄ ՅԵՎ ԻՆՔՆԱԿՈՉԻ ՄԱՀԸ

Կեղծ-Դմիտրիի հետ Մոսկվա յեկան շատ լիներ: Նրանց առաջին ջոկատը, վոր ինքնակոչի հետ մտավ Մոսկվա, իր կազմում ուներ 8,000 ժարդ: Լեները Մոսկվա մտան, ըստ տարեգրի խոսքերի, «ուաղմական կարգով . . . ասպազենով և նիղակներով»: Նրանց մուտքը նման եր նվաճած յերկրում հաղթողների յերթին:

Մնիշեկներն ու վիշնեվեցկիները կարող եյին լիակատար հաղթանակ տանել: Ինչ վոր չեյին կարող ձեռք բերել բացարձակ կովում՝ նրանք ստացան խորամանկությամբ և խարեյությամբ: Ինաերգենուների զորքերը ոռւսական մայրաքաղաքումն եյին: Մոսկովյան պետության տերերը դարձան լիական պահերը:

Մոսկվայում լիներն իրենց չափաղանց զայրացուցիչ կերպով եյին պահում: Նրանք արհամարեանքով եյին վերաբերվում գեափի Մոսկվայի բնակիչները և ամեն քայլափոխում: Նրանց հասկացնել եյին տալիս, վոր նրանք Մոսկվային տալիս են իրենց թագավորին: Լեների անբարտավանությանն ուղեկցում եր նրանց անպատճառ վերաբերմունքը գեպի ուրիշի ունեցվածքը: Նրանք խանութներից ձրիաբար վերցնում եյին ապրանքների, չափաղանց գոռողաբար եյին վարգում այն աների բնակիչների հետ, վորտեղ նրանց բնակեցրել եյին: բացարձակորեն վիշրագում եյին Մոսկվայի մարդկանց և ամեն կերպ ծաղրում եյին ոռւսական ժողովրդական սովորությունները:

Այդ բոլորը չափաղանց զայրացնում եր մոսկովյաներին:

Մոսկավականությունն ավելի կա սաստկացավ, յերբ Մոսկվա ժամանեց Կեղծ-Դմիտրիի հարսնացու պահնանա Մարինա Մնիշեկը լեհական շլյախտիչների յերկու հազարանոց նոր ջոկատի հետ միասին: Մարինայի ընդունելությունը շատ հանդիսավոր եր: Միայն Մարինայի նվերների վրա Կեղծ-Դմիտրին ծախսեց չորս միլիոն վոսկի ոռւբլուց ավելի: Շատ միջոցներ ծախսեց նաև լեհ աղնվականների այն շքախմբի նվերների և տոնակատարությունների վրա, վորը Մարինայի հետ եր յեկել:

Այդ ամբողջ գոռող ու ամբարտավան շլյախտան Մոսկվայի վրա նայում եր վորպիս նվաճված յերկրի, վորտեղ պետք ե հաստատելին իրենց կարգերը, իսկ ոռւս մարդկանց դարձնելու եյին իրենց հպատակները:

Մոսկովյաները ուշք դարձրին զենքի աստառության վրա, վոր լիները ներմուծում եյին Մոսկվա: Մինչև ատամները զինված, խոշոր զինվորական ջոկատներով Մոսկվա մանող ոտարերկրացիները, կարելի յեր յենթագրել յերբեք ել խաղաղ նպատակներ չունելին: Կեղծ-Դմիտրիի հարսնացուն՝ Մարինան Մոսկվայում լինական քաղաքականության բացարձակ կիրառողն եր հանգիստանում: Լեհական թագավոր Միգիզմունդ Ա-ը, ուղարկելով Մարինային Մոսկվա, նրան խիստ հրահանգ տվեց, վորպիսով նա Մոսկովյան թագուհի լինելով, ամենից առաջ հոգտանի Լեհաստանի շահերի մասին: Մարինան Միգիզմունդին խոստացավ ընդմիշտ մալ նրան հավատարիմ հպատակ:

Մարինայի Մոսկվա ժամանելուն պես սկսվեցին աղմկաթ տոնակատարություններն ի պատիվ ինքնակոչի և Մարինայի պսակագրության: Ընդունին լեներն ու ինքնակոչը բոլորովին հաշվի չեյին առնում պուսական սովորություններն ու ժողովը դական շահերը: Մոսկվայի բնակչությունը, իր հայրենի քայլաքում լին պատերի անպատճառ տիրակալումից զայրացած, տեսնելով, վոր ինքնակոչը Վիշնեվեցկիների և Մնիշեկների ձեռքում խաղաղքեցից ավելի բան չե, չկարողացավ այլիս լուս վկա լինել նրանց կողմից ոռւսական ամեն ինչի վոտնահար լինելուն:

1606 թվի մայիսի 16-ի լույս 17-ի գիշերը Մոսկվայում ապստամբություն բռնկվեց լիների գեմ: Ապստամբները գրավեցին Կրեմլը և ջախջախեցին այնաև լեներին: Դրանից

ոգտվելով, բոյարները դավագրություն կազմեցին և ինքնակոչ չին սպանեցին. Սկսվեց Մոսկվա յեկած լիճական պաների ջարռը. Նրանցից շատերը մայիսի 16-ի լույս 17-ի գիշերը վոչնչացան. Ապստամբած ժողովրդի կատաղությունն ամենից առաջ ուղղվեց ինքնակոչ փաստացի տերերի՝ Մնիշեկների և Վիշնեվեցիների դեմ. Զարդից վողջ մացած պաներին առաջարկվեց վերագառնալ Լեհաստան, Մոսկվայում թողնելով կողովուտն ու նվերները, զոր ստացել ելին ինքնակոչից:

Այսպիսով, լեհերի առաջին ինտերվենցիան Մոսկվայում կրախի յենթարկվեց. Լեհական պաների կողմից Մոսկվայի պետության նվաճումը չիրագործվեց:

## ԲՈԼՈՏՆԻԿՈՎԻ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Ինքնակոչից հետո Մոսկվայում թագավոր յեղավ մեծատօնմիկ բոյարին և իշխան Վասիլի Շույսկին. Առանց ամբողջ ուստական յերկրի համաձայնության Մոսկվայում Կարմիր հրապարակի վրա նրան թագավոր «Հռչակեցին» բոյարներն ու վաճառականները. Մնացած ժողովուրդը՝ չքավորները, տնայնագործները, մանր առևտրականները քաղաքներում, բազմաթիվ գյուղացիները գյուղերում և նույնիսկ մանր կարվածքավոր աղնուվականները զիմ ելին Շույսկու թեկնածությանն իրրե թագավորի. Քաղաքի և գյուղի չքավորներն առաջվա պես ծանր զրությունից յիշը ելին վորոնում «Ծիկական» թագավորի մեջ, վորը պետք ե, ըստ նրանց պատկերացման, ազատեր իր ժողովրդին ծանր ճորտական վիճակից:

Սպանված Կեղծ-Դմիտրիի զիակը գետ ընկած եր Մոսկվայում Կարմիր հրապարակի վրա ընդհանուրի տեսողության համար, իսկ Մոսկվայից գուրս արդեն բոլոր քաղաքներում և գյուղերում լուր եր արջում, զոր Դմիտրի թագավորին չեն սպանել նա ազատվել և և շուտով նորից կվերադառնա Մոսկվա և այնտեղ կզրավի իրավունքով իրեն պատկանող Մոսկվայն գահը:

Մոսկվայի պետության ծայրամասում, Սկվերսկի յերկրում, սկսեցին հավաքվել Մոսկվայից բոլոր զժգոնները՝ փախտական գյուղացիները, բոյարական ճորտերը, կազակները: Նրանք կազմում ելին ջոկատներ, վորոնք պատրաստ ելին Մոսկվայի վրա շարժ-



Իվան Բոլոտնիկովը ծրախկի գյուղի մոտ:


վելու, վորագեսղի այնտեղ զահ նստեցնեն իրենց գյուղացիական թաղավորին: Այդ ապստամբներին առաջնորդ դարձավ փախըստական ձորտ իվան Բոլոտնիկովը: Այդ ժարդը մինչ այդ յեղել եր թաթարների մոտ գերի, թյուրքական թիանավերի վրա ստրուկ, բախտի բերմամբ ընկնելով Վենետիկ, նա այդտեղից անցավ Լեհաստան, վորագեցից վերադառնում եր Մոսկվա և ճանապարհին հարեց կազակաց յուղացիական շարժմանը, վորն ուղղված եր Մոսկվայի դեմ:

Իր շուրջը հավաքելով մոտավորապես 12.000 մարդ, Բոլոտնիկովը նրանց հետ շարժվեց գեղի կրոմի, գլխովին ջարգեց ցարական Վուլողա Տրուբեցկիին և նրան յետ շարտեց գեղի Որյոլ: Կրոմիի տակ ցարական զորքերի կրած պարտության ճետեվանքները հակայական եյին: Թաղաքները մեկը մեռուի յետեվից անցնում եյին Բոլոտնիկովի կողմը, վորը մի անդամ ևս ջարգեց ցարական զորքերին Տրոիցիի գյուղի մոտ, Մոսկվայի մերձակայքում: 1606 թվի հոկտեմբերի վերջերին Բոլոտնիկովը մոաեցավ Մոսկվային և այսուղ բանակ գրեց Կոլոմենսկի գյուղի մոտ: Բոլոտնիկովի զորքերը հակայական ուժ եյին ներկայացնում, վորի գիմաց Շույսկին վոչինչ չուներ հակադրելու: Թվում եր, թե մի ճիգ ել և Բոլոտնիկովը Մոսկվան կզրավի:

Բայց այստեղ յերեան յեկան Բոլոտնիկովի բանակի ներս ուռում յեղած հակասությունները:

Բոլոտնիկովի կողմն եյին անցել շատ աղնվականներ, վորոնք դժգոհ եյին Շույսկուց՝ վորպես բարձր մեծատոհմիկ աղնը վականության ներկայացուցչից: Շույսկին ձգտում եր պաշտպանել են մեծատոհմիկ բոյարության դասակարգային շահերը, վորը հակասում եր մանը կալվածքավոր ծառայող աղնվականների ցանկություններին: Վերջինների առաջնորդն եր ոյազանցի աղնը վական լյապունովը: Բոլոտնիկովի զորքի մեջ այդ աղնվականության զգալի խմբի գլուխ կանգնած եր հարյուրապետի վորդի հստած Պաշկովը:

Մինչև Մոսկվա աղնվականները Բոլոտնիկովի հետ միասին եյին գնում, զրանով նրանք խախտում եյին իրենց համար ատելի Շույսկի գահի ամրությունը: Իսկ յերբ Շույսկիի գրությունը գարձավ կրտսեկական, նրանք տեսան, վոր իրենք գյուղացիների հետ ուղեկից չեն:



ՔՅ 39

Բոլոտնիկովի գործերը

Բոլոտնիկովի հաղթության և Շույսկիի տապալման վեպքում իրենք չեյին լինելու յերկրի տերերը: Տերեր են դառնալու ճորտերն ու կազակները:

Այդ վերջինում աղնվականների համոզված լինելը բղխում եր այն թուցիկներից, վոր Բոլոտնիկովը ուղարկում էր Մոսկվայն բնակչությանը: Աղնվականները հազորում եյին միամյանց, վոր այդ թուցիկներում Շույսկիկովը ու իր գործակիցները օհրածայում են բոյարական ճորտերին՝ կոտորել իրենց բոյարներին, նրանց կանանց, վոտչինաները (հայրենական կալվածքները) և կալվածքները խոստանում են նրանց, շաղակրատներին և անանուն գովերին հրամայում են ջարդել վաճառականներին և բոլոր առեւրական մարդկանց, նրանց ունեցվածքը կողպատել, նրանց՝ այդ զովերին կանչում են իրենց մոտ, ուզում են առաջ նրանց բոյարություն, վուլվոգություն, առաջին պաշտոնները և գպիրություն:

Հական ինտերվենտ, ջախջախումը — 2

Յեվ աղնվականները վորոշեցին, վոր իրենց ավելի շահաւմեա և Շույսկիին ծառայել, քան թէ հետո կոտորվել իրենց ճորտերի ձեռքով: Նրանք Բոլոտնիկովից անջատվեցին, և նրանից ծածուկ, Լյապունովի առաջնորդությամբ, հեռացան... Մուկըվա: Բոլոտնիկովի զորքի մեջ մնաց միայն Պաշկովն իր զորախմբով:

Ծարական զորավար Սկոպին-Շույսկին, անսպասելիորեն իր  
ուժերի ավելացում ստանալով Մոսկվայի կողմն անցած ազնվա-  
կան աշխարհազորի հաշվին, շարժվեց Բոլոտնի կովի վրա և կոտ-  
վի գյուղի մոտ, Մոսկվայի մերձակայքում, ուժեղ պարառություն  
հասցըն նրան: Բոլոտնի կովի զորքերը կավում եյին քաջաբար,  
մարտի մեջ ցույց տալով բացառիկ համառության և հմտության  
որինակներ, մարտական «գործողությունների» ընթացքում բո-  
լոտնի կովյան աշխարհազորի մարտիկները լայնորեն ոգտագոր-  
ծում եյին հողային ամրությունների սիստեմը. արիաբար  
զիմակայում եյին հակառակորդի հրետանու կրակին. կարողա-  
նում եյին կառուցել շարժական ամրոցներ՝ «վագենբուրգներ»:  
Այդ բոլորը պայմանավորում են Բոլոտնի կովի պայքարի հա-  
մառությունն այն զորքերի գեմ, վոր գուրս եր բերել Վասիլի  
Շույսկի թագավորը: Բայց Կոտլիի ճակատամարտում կավի վըն-  
ուական ըռպեյին իստոմա Պաշկովը նույնպես զավաճանեց Բո-  
լոտնի կովին և անցավ նրա թշնամիների կողմը: Բոլոտնի կովը  
ջարդվեց: Նա առաջ փախավ կալուգա, այնտեղից ել Տուլա,  
վորտեղ պաշարվեց Շույսկիի զորքերով, այնտեղ հանձնվեց թա-  
գավորի գթասրտությանը և վերջինի հրամանով աքսորվեց  
Կարգոպոլ քաղաքը, վորտեղ նրան խեղղեցին գետի մեջ,

## ՅԵՐԿՐՈՐԴ ԼԵԶԱԿԱՆ ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱՆ

Բոլոտնիկովի գլխավորած գյուղացիական շարժման ջախ-  
ջախումը Շույսկիին չափատեց վտանգից: Սեվերսկի յերկրի կող-  
մից նորից լուր հասավ, վոր այնտեղ յերկացել և Դմիտրի  
թագավորը: Իրոք, սեվերսկի Ստարոդուր վոքրիկ քաղաքում  
հայտնվել եր մի մարդ, զորն իրեն անվանել եր Դմիտրի՝ իվան  
Ահեղ թագավորի վորդի: Խոկապես թե նա ով եր, նույնպես հայտ-  
նի չե, ինչպես առաջին ինքնակոչի վերաբերմամբ, բայց նա

լին պաների զավթողական քաղաքականության համար նույնական պիսիդ գործիք եր, ինչպես զոր առաջին ինքնակոչը՝ Միայն Մուկվայում առաջին ինքնակոչի ջախջախված տերերին՝ Վիշնեվեցկիներին և Մնիշներին այժմ փոխարինել ելին ուրիշ «տերեր» ու «կազմակերպիչներ»։

ինքնակոչի շուրջն սկսեցին հավաքվել լեհական ջարդված գրուժինաների մնացորդները, վոր վոնդված եյին Մոսկվայից: Լիտվայից կեղտոտ արկածախնդիրների ջոկատի հետ յեկավ պան Քուղիլոն, նրա հետեւից՝ Մեխովլեցկին, Ռոժինսկին: Յերեք հաշորի չափ զորք հավաքելով, յերկրորդ ինքնակոչը նրանց հետ շարժվեց Մոսկվայի վրա: Ճանապարհին նրան միացան Վալավոսիի, Տիշկեվիչի, Լիտվովսկիի և ուրիշների լեհական ջոկատները:

1608 թվի գարնանը ինքնակոչվել է Հայոց թագավորություն, անարգել կերպով հասավ մինչև Մոսկվա և այստեղ բանակ դրեց Տուշինա գյուղի մոտ, վորի պատճառով հպատակ թյան մեջ մտել եւ «Տուշինոյի գող» անունով։ «Գող» անունն ինքնակոչին տվել եւ ժողովուրդը, զբանով հաջորդ կերպով ընսրութեավ ինքնակոչի շարժման խոկական բնույթը։

Տուշինո գալու մատինտին ինք-  
նակոչն ուներ 18.000 ձիավոր  
մարդկա և 2.000 հետեւակ լիներ.  
18.000 զապարոժյան կազակներ  
և 15.000 Դոնի կազակներ:



«Տուշինոյի գողը»

Մոսկվան ուժեղ կերպով ամրացված եր և պաշտպանվում եր յոթանասուն հազարանոց զորքով՝ յերիտասարդ, բայց տաղանդավոր զորապես Սկոսին Շույսկիի հրամանատարությամբ: Ինքնակոչը Համարձակվեց գրոհել մայրաքաղաքը: Տուշինոյի մոտ ամրացած բանակ գնելով, նա հույս ուներ Մոսկվան տիրելու յերկարատեղ պաշտպան միջոցով: «Տուշինոյի գողի» բանակատեղը ժամանեց Մարինա Մնիշեկը, ինքնակոչին իրեն ամու-

սին ճանաչեց, վորը բնակչության աշքում, ինչպես հույս ուներ Կեղծ-Դմիտրին, պիտի բարձրացներ նրա ապադա խոշոր հաջողության շահնսելը:




Լեհական զորքեր

Բայց այդպես չեյին հաշիվ անում ինքնակոչին շրջապատող բաղմաթիվ Ռոժինսկիները, Միխովիցիկիները, Զբրովսկիները և այլ խարերաները, վորոնք Լեհաստանից յեկել ելին ինքնակոչի մոտ և ծարավի ելին՝ անհապաղ կողոպուտի և բնակիչներին ավերմունք հասցնելու:

Նրանցից մեկը, Յան Սալեկան, լեհական թագավորության կանցիքի յեղբայրը, վորն իր հայրենիքում զատապարտված եր անգուստ և կամայական լինելու համար, վորակեազի Տուշնոյում անդորձ չնստի, ձեռնարկեց Տրոիցե-Սերգիեվի վանքի պաշտօնականը, հույս ունենալով այն առնելուց հետո ստանալ մեծ ավարտ Մի ուրիշ՝ Լիսովսկին, մի կեզտուա արկածաբինդիր և գող, այդ ժամանակ իր ասպատակություններով ամայացնում եր Ռյազանի, Վլադիմիրի և Նիժնիգորոդի մարզերը։ Առանձին

լեհական ջոկատներ, նու յնպիսի Սալեկանիների և Լիսովսկիների առաջնորդությամբ, շարժվեցին Մուկայից դեպի հյուսիս, կողապատելով և ավերելով քաղաքներն ու գյուղերն ընդհուպ մինչև Վոլոգդա։



Պայքարը Մուկայի շրջանում 1607—1611 թվերի ժամանակաշրջանում։ Լեհերի բռնությունից ու կողոպուտներից հառաջանք ու վողք բարձրացավ ամբողջ ուստական յերկրութեա ժողովուրդը, վորսկովում անկեղծորեն հավատում եր ցարի պաշտպանությանը և հետո միայն հասկացավ «զողին», սկզբում իր գանգաներով դիմում եր նրան։ «Տուշինոյի գողի» բանականզն ելին ուղարկվում աղերսագրեր ու խնդիրքներ՝ բնակչությունը լեհերից պաշտպանելու մասին։

«Տեր-թագավորին, — գրված և նրանցից մեկում, — ամբողջ Ռուսիայի մեծ իշխան Նիժնինովգորոդին ծնկոչոք ինդրում և աղերսում են քո վարքերը, թագավորական, աղքատ, կողոպաշված ու հրդեհից տուժած գյուղացիները։ Կարանք մենք, ա-

Հոգեգալստյան որը, հունիսի 5-ին ասում եւ տարեգիրը, ամբողջ Տուշինոյի բանակն իր տեղից յելավ և արշավից Մոսկվայի վրա:

Առջևից կայտառ, փրփրակալած արդամակների<sup>1)</sup> վրա արշավում եյին լինական ձիավորները, Նրանց յետեից հղոր, խոյաւարդիտ բազմությամբ շարժվում եյին կազակները: Կազակների յետեից զալիս եր հետեւակաղործը, գլորում եյին թնդանոթները, ճոճուում եյին գումակները: Հսկայական զորքը, նեղ յերիզի պես ձգվելով ճանապարհի յերկարությամբ, դանդաղորեն շարժվում եր դեպի Մոսկվա՝ վատահ լինելով իր հաղթանակի վրա:

Բարձրածայն նվազում եր յերաժշտությունը, զարկում եյին թմբուկներն ու ծնծղաները, արեի տակ փայլում եր զենք ու զրանք, հիծյալները բորբոքեցնում եյին իրենց ձիերին, սըրարշավ առաջ նետվելով նիզակն ի ձեռին, կամ կոտորում եյին յերեւակայական հակառակորդին: Ամբոխի մեջ աղմուկ եր տիրում, լսվում եյին առանձին կանչեր: Հնչում եյին հրամանի բառեր: Զորքն անցնելով Խիմկան, ալիքի պես քշվում եր զեպի Խողինկա զետի գետանցը: Խողինկայի մոտ, հակառակ կողմի բլակի վրա, կանգնած եր մոսկովյան պահպանաջոկատը: Պաշտպանվելով «գույայ-գորոդներով» (տես 28 եջում) և հսկելով աջից անտառի յելքի վրա ու ձախից Մոսկվա-գետի անցարանների վրա, պահպանիներն արթաբար զիմավորեցին տուշիներին: Մարտն սկսվեց:

Մոսկովցիների կրակի տակ լիները փորձում եյին ճեղքել անցնել Խողինկան: Բայց ամեն անգամ, հենց վոր նրանց հեծելազորն իջնում եր զեպի գետը, բացվում եյին «գույայ-գորոդներ», նրանց յետեւմ թագնված հրանոթները կը ակում եյին, և տուշինցիները, մոսկովյան հրետանու կը ակից հնձվելով, անկարգ կը լուզով յետ եյին շպրտվում:

Պահպանաջոկատի սուրհանգակն շտապում ե Մոսկվա՝ լուր տանելով լիների հարձակման մասին, իսկ այդ ժամանակ լինեական հեծելազորը քողարկելով իր գործողությունները Խողինկայի վրայից անցնելու նոր ու նոր փորձերով, վարդավագ-

վերկեցինք քո ուազմի մարդկանցից: Ճիերը, կովերը և ամբողջ կենդանիները խլված են, իսկ մենք ինքներս հրկիված ու չարչարված են, և ինչ վոր աշուրայի հաց ունեցինք, այն ել վառվեց, իսկ մնացած հացը քո տեղավորած մարդիկ կալսեցին և քամհարեցին: Մենք, քո վորքերը, այժմ թափառում ենք մուրալով, ապրելու և ուտելու բան չունենք, կանանցով միասին մեռնում ենք սովահարությունից և ելի մեղնից են ուզում քո հարյուրապետները փողն ու պահերի կերակուրը, փողի կողմից կանգնած ենք տանջանագանձման հրապարակում<sup>2)</sup>, իսկ փող մենք վոչ մի տեղից չենք կարող վերցնելը<sup>2)</sup>:

Եթէրորդ խնդիրքը կալվածատիրոջից եւ «իմ գյուղում կանգնած ե քո սրբստավի պան Մուշնիցիին, իմ վորդուն ուժով վերցը ինձնից իր մոտ, բանակավայրը, իսկ ինքը յուրաքանչյուր գիշեր գալիս ե ինձ մոտ, ինձ տնից զուրս ե անում, հաց չի տալիս, իսկ հարսիս բռնությամբ իր անկողնում եպահում»:

Առանձնապես վայրագություններ եր անում վոմն պան Նալիվայկո, վորն ըստ աղերսագերի «շատ մարդկանց, ազնվականների և բոյարական վորդիների մահվան աստիճանի ծեծում եր, ցցի նաև հնում, իսկ կանանց ու վորդիներին խայտառակում և գերի վերցնում»:

Ամեն կողմից բողոքներն ասում եյին մի բանի մասին՝ «գալիս են մեղ մոտ լին ուազմի մարդիկ, մեղ ծեծում են ու տանջում, և կենդանիները հափշտակում»:

## ՃԱԿԱԾԱՄԱՐՏ ՄՈՍԿՎԱՅԻ ՏԱԿ

Մինչ այդ լնքնակոչ «թաղավորը» շարունակում եր անհուսալիորեն քաշ գալ Մոսկվայի մոտ: Նրան շրջապատող լիները, չկարողանալով տիրել Տրոիցի-Սերգիևկալի մայրավանքին և վախենալով՝ թե իրենց ուժերը դեռ ու դեռ կկորչեն ռուսական զանազան քաղաքների վրա կատարվող մանր կողոպտիչ արշավանքներում, 1609 թվի գարնան Մոսկվայի վրա վճռական հարձակման ծեռնարկեցին:

1) «Կանգնել տանջանագանձման հրապարակում» նշանակում ե, հրապարակ հանվել իբրև անվճարունակ պարտապան, փորին ամեն մի անցնող կարող եր ծեծել և ստորացնել:

2) Մոլովով, Ռուսաստանի պատմություն, հատ. 8, էջ 269:

քով (на рисах) գնում եր գեղի ձախ կոպտելով կի անտառը շրջանցնելու համար:

Թիկունքից ինչ վար մեկի խուճապային աղաղակը՝ «եւ-էբրը» — խառնեց Մոսկովյան շարքերը, Մարտական կարգը յերերաց: Եթական հեծելազորը, շըջանցնելով անտառը, ձախ կողմից զրոհեց Մոսկովյան պահպանաջոկատի վրա: Թեից իրենց հրետանին պաշտպանելու համար «գուլյայ-գորոդները» տեղափոխելն ուշ եր: Թշնամին զրոհեց միաժամանակ ճակատից և թիեց: Ռուսական «նարյալը», այսինքն՝ հրետանին դարձավ լեհական հեծելազորի առաջին ավարը:

Հետևակաղորը, թողնելով իր «գուլյայ-գորոդները», վոր այժմ իրեն չեր սպաշտպանում հակառակորդից, կովով սկսեց քաշվել գեղի Մոսկվա, իր թեսվ հարերով Մոսկվա գետին:

Տուշինյան հետևակի գետանցումը Խոդինկայի վրայով շատ դանդաղ եր ընթանում: Այդ վրկեց մոսկովյան պահպանաջոկատին վերջնական ջախջախումից: Քողարկվելով գետափով և թփուտներով, մոսկովյան ստրելեցներն ու ուղմիկներն արդեն մոտենում եյին Վագանկովյին, ամեն րոպե յետ մզելով լեհական հեծելազորի զրոհները:

Կեսօրն անցել եր: Քաջարի ջոկատի ուղմամթերքը վերջանալու մոտ եր: Խոդինկայի կողմից մարտական կարգով շարփում և գեղի Մոսկվա յեր առաջանում այս ափն անցած տուշինյան զորքը: Թվում եր, թե ջոկատի վերջին ժամերը հաշված են:

Բայց այդ ժամանակ պահպանաջոկատը նկատեց մոսկովյան զորքի ծանրթ ուրվագեցները, վոր Մոսկվայի կողմից մոտենում եր պահպանաջոկատին: Մեծ գնդին առաջնորդում եր իշխան կորակինը, աշ թեի գնդի հրամանատարն եր Գոլիցինը, ձախինը՝ Լիկովը:

Մոսկովյան զորքը միահամուռ կերպով հարվածեց լեհերին: Մոսկովյան պահպանաջոկատի կողմից կաշկանդված լեհական հեծելազորը թույլ կերպով պատասխանեց այդ հարվածին: Նրա շարքերը արագորեն խառնվեցին և նա, աշխատելով պահպանել կարգը, աճապարանքով սկսեց քաշվել գեղի իր հետևակակաղորը:

Մոսկովյիների զրոհը տուշինցիների վրա այժմ ընթացավ յերկու կողմից՝ Մոսկվայից հարձակվող գնդերից և պահպանաջոկատից, վոր աղատվել և շարաւակում եր կովեր:

Առաջվա պես իր թերով կոչելով գետափին, այդ ջոկատն սկսեց անցնել տուշինցիների թիկունքը: Տուշինցիները վախենաւով, վոր մոսկովյիների այդ զորաշարժը կարի իրենց բազայից՝ Տուշինոյից, նրանք սկսեցին նահանջել գեղի Խիմկա գետը, վոր պեղադի նրա վրայի գետանցնելը պահանջն իրենց ձեռքում:

Մոսկովյան զորքն ուժեղացրեց ճնշումը տուշինցիների վրա, և Խիմկա գետը շուտով վարձավ Մոսկվայի վրա հարձակվող տուշինցան ուժերի գերեղմանը: Մոսկովյան հրետանու կրակը, վերակենդանալով նույնիսկ այն հրանոթների կողմից, վոր առավայան զրավել եյին լեհերը, այժմ լեհերին ամբողջ խմբերով քշում եր գեղի գետը, վորտեղ նըսնք կամ զիմանար գնդականար վուճանում եյին:

Համարյա ամբողջ լեհական հետևակաղորը, վոր զանվում եր Տուշինոյի բանակում, վոչնչացավ այդ մարտում: Յերկորդ լեհական ինտերվենցիայի ուժերը վերջնականապես ջարդվեցին: «Գողը» մի վորոշ ժամանակ գետ գոյություն ուներ, բայց լեհական պաների մտադրությունն ինքնակոչների նկատմամբ յերկորդ անգամ չարաշար կործանվեց: Իսկ առւսներն այդ կովում ցուցաբերեցին նույնպիսի քաջություն և վճռականություն, ինչպես Կուլիկովո դաշտի ճակատամարտում և Զուդ լճի սառցի վրա մղված մարտում:

## ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

1809 թ. ամռանը Մոսկվայի մոտ յեղած մարտը մեր առջեվ բաց և անում մոսկովյան և լեհական ուժերի այն ժամանակվա կառուցվածքի, վարժվածքի, սպառազինման և տակտիկայի առանձնահատկությունները:

Յերկու կողմից ել դուրս եյին գալիս անկանոն զորքեր:

## ԼԵԶԱԿԱՆ ԶՈՒՔԸ

Լեհական կողմում մենք տեսնում ենք ձեռնարկուներ, վոր լեհական Այախտայից կազմված ջոկատների պետեր են: Նրանց ջոկատները կոմպլեկտավորվում եյին մանրակալվածքաւոր, սնանկացած Այախտայից, ճորտերից, իշխանական վոր, ամռանկացած Այախտայից, ճորտերից, իշխանական պահապորներից կամ ամեն տեսակ թափառաշրջիկ վարձ-

կան խուժանից, վորը պատրաստ եր փողի համար պատերազմել այն կողմից, վորը դրա համար ավելի թանգ կվճարի: Այդպիսիք եյին Սապեկայի, Լիսովակիի, Ծոժինսկիի, Զրոբովսկիի և շատ ուրիշ ինական առաջնորդների ջոկատները, վորոնք յեկել եյին Մոսկվայի պետությունը կողոպուտի և ոգուտի նպատակով: Կային ջոկատներ, սովորաբար Այսիտայից կամ կազակներից, վոր կազմվում եյին ընկերության սկզբունքով: Ընկերությունն ընտրում եր առաջնորդ, սահմանում եր կարգապահության և ներքին կարգի կանոնները և մնացած բաներում գործում եր սովորական պահական ջոկատների սկզբունքով:

Նույնպիսի տիպի համեմատ եր կազմվում նաև թագավորական դորքը՝ միայն այն տարբերությունը, վոր նրա կազմում մեծատոհմիկ պաներն ավելի շատ եյին և կային վարձկան գերմանական գնդապետներ՝ հրեանային և ինժեներական գործի մասնագետներ: Թագավորն իր զորքի մեջ միայն անվանական պետ եր: Յուրաքանչյուր պան կովում եր այնքան ժամանակ, քանի գեւ այդ նրան ձեռնուու յեր, յեթե այդպիսի ոգուտը վերանում եր, նա լրում եր մարտի դաշտը և իր մարդկանցով հեռանում սեփական կալվածքները:

Լեհական ջոկատների սպառազինությունը կազմված եր նիզակներից, թրագաշույններից, կամ թրերից և հրացաններից: Կազակների զենքն եր կարճ տեղը, պատրուզավոր հրացանը կամ նետ ու աղեղը և սակը: Բանակի սպառազինման մեջ եր մտնում թեթև և ծանր հրեանային: Ավելի մեծազարմ և հարուստ սպազմիկները արշավանքի յելում են ձիով, ունենալով ողազահներ և փետրազարդ սաղավարտներ:

Սպառազինությամբ և մարտական պատրաստականությամբ լեհական զորքը յետ չեր մնում իրեն ժամանակակից արեմտյան յեվրոպական զորքերից: Նրա հիմնական թերությունն ընդհանուր անկարգապահության մեջ եր և այն, վոր զորքի մեջ բացակայում եր միասնական դեկավար կենտրոնը:

Լեհական զորքը բազմաթիվ առանձին ջոկատների խառնակավաք եր. նա վոչ մի բանով ցեմենտավորված չեր, և նրա առանձին ջոկատներն ուղած բոպեյին կարող եյին նրանից հեռանալ կամ ընդհանուր շահերին հակազրել իրենց շահերը:

## ՄՈՍԿՎՅԱՆ ԶՈՐՔԸ

Մոսկվայի պետության դինված ուժերի հիմնական ներկայացուցիչը կալվածատեր աղնվականությունն եր, վորը թագավորի առաջին կանչի համաձայն պետք և պատերազմի դուրս գար «ձիով, մարդով և գենքով»: Սովորաբար զորահավաքի ժամանակ նշանակվում եյին վորոշ քաղաքներ, վորտեղ պետք և ներկայանային աղնվականներն իրենց կալվածքներից՝ մարդկանցով, զենքով և մթերքներով:

Այդտեղ հենց հավաքվում եյին արշավանքի յելնելու նշանակված, այսպիս կոչված, զինվորացու տրվող մարդիկ<sup>1</sup>), վորոնք ժողովում եյին ավաններից և զավառակներից, պատրիարքական, վանքապատկան և այլ կալվածքներից, ինչպիս նաև աշխարհիկ սեփականատերերի կալվածքներից, վերջիններն իրենք արշավանքի չեյին դուրս գովիս: Այս ձեռվ հավաքված մարդկանց ոսնիկ եր վճարվում: Նրանք պետք և հավաքակայանները դային հրացաններով, աղեղներով, տեղերով և տապարներով զինված: Նրանցից ընտրվում եյին տասնապետներ, հիսնապետներ և հարյուրապետներ:

Ռազմիկ զինվորացու տրվող մարդիկ պետք և լինեցին վոչ ծեր և լավ վարքի տեր: Հարբեցողությունն ու կողոպուտը հետապնդվում եյին նրանց շարքերում: Զորահավաքը սովորաբար մի քանի ամիս եր ձգձգվում: Յերբ բոլորը հավաքվում եյին, հակառակորդի զեմ արշավանք եր նշանակվում: Լիների և նրանց ինքնակոչների զեմ Մոսկվայի պետության մղած պայքարի ընթացքում կատարվեց սազմի մարդկանց մի քանի այդպիսի զորահավաք և արշավանք ընդդեմ թշնամու:

Ժողոված զորքերի վրա կարգվում եր ավագ զորապետ՝ սովորաբար թագավորին մոտիկ աղնվականության ներկայացուցիչը: Ավագ զորապետը թագավորի հավատարմատար անձն եր զորքի մեջ: Ռազմական զեկավարության համար նրան ողնական եր տրվում մի ուրիշ զորապետ՝ վորպիս սազմական գործի մասնակետ: Այսպիս որինակ, յերբ առաջին ինքնակոչը մոտեցավ


1) Զինվորացու տրվող մարդիկ (даточныe люди) եբրկ զինվոր հանձնվում եյին զորակոչի յենթակա դասերից: — Մանոթ, թարգմ.

Նովգորոդ-Մելքիրսկիին, այնտեղ ավագ կորապետը (վոհվողա) իշխան Տրուբեցկոյն եր, իսկ նրա մոտ ուսղմահան ղեկավար եր յերկրորդ դորավետ Պյոտր Բասմանովը: Նույնն եր նաև յուս ջոկատներում:

Չորքի կազմի մեջ սովորաբար մտնում եյին հետեւկազորը, հրետանին, վոր «նարյադ» եր կոչվում, և հեծելազորը: Բացի դրանից, դորքի մի առանձին տեսակ եյին «Գուլյայ-գորոդները»: Այսպես եյին կոչվում կաղնու տախտակներից կազմված վաճանները, վոր տեղափոխում եյին դորքի յնտեւից: Հրացաններից կրակելու համար նրանց մեջ կային անցքեր: «Գուլյայ-գորոդները» մարտադաշտ եյին հանվում, հատուկ գլուխների վրայով գլորելով, և բոլորը միասին վերցրած կազմում եյին կամ ամրողական մի պատ, վորի յնտեւից հրացանաձիգները հրակնատանցքերի միջով կրակում եյին, կամ առանձնակի ամրացած կետեր՝ ոեցուտներ, վորոնք համառորեն պաշտպանում եյին վորոշ սահմանագծեր կամ մարտի կարելոր տեղաժամաներ:



Սարեկեցները (հրացանաձիգները):



«Գուլյայ-գորոդը» դիմի դիրքերը դուրս քաշելը:

Սովորաբար «գուլյայ-գորոդների» յետելը զրվում եր հրետանին: «Գուլյայ-գորոդները» բացվում եյին, մեկ կամ մի քանի կրակոց եր կատարվում, և նորից կցվում եյին՝ իրենց յետեռում ծածկելով հրետանին:

Մոսկվայի պիտության մեջ «գուլյայ-գորոդները» մեծ զարգացում եյին ստացել և զինված ուժերի կառուցվածքի մեջ նրանց շատ մեծ նշանակություն եր արվում: «Ինչպես քաղաքը շինված և տախտակներից, վահանանման եւ ի պաշտպանություն հավատարիմների», տարեգիրը բնորոշում է «գուլյայ-գորոդները»:


«Գուլյայ-գորոդները դեկավարելու համար զորքի մեջ նշանակում եր առանձին գուլիվոյ վոհվողա, այսինքն՝ «գուլյայ-գորոդների» պետ:

Հետեւակը կազմված եր հրացանավոր հրաձիգներից, վորպես զորքի տրտոնյալ տեսակ. նրանք զինված եյին հրացաններով (պիտալ): Մնացած ռազմիկներն իրենցից ներկայացնում եյին խայտաճամուկ մասսա և զինված եյին ինչով վոր պատահի՝ մահակներով, կացիններով, տեղերով:

Հեծելազորը կազմված եր «ընտիր ռազմիկներից»՝ ջոկովի ձիավորներից, վորոնց սովորաբար հավաքում եյին բոյարների և թաթարական իշխանների՝ մարզաների վորդիներից, նրանց մարդկանց հետ միասին, և քաղաքապահ կազակներից<sup>1)</sup>, վորոնց գրավում եյին զորքի մեջ նրանց մասնակցության ոգտարերությունն ապահովող պայմաններով:

Հրետանին—ըստ մոսկովյան տերմինալոգիայի «նարյաղը»—նկարագրվող ժամանակակիրում զենքի բավական զարգացած տեսակ եր: Պետք է նշել վոչ միայն բերդերի մեծ հագեցվածությունը հրետանական միջոցներով (որինակ, Սմոլենսկում 4000 մարդուց բաղկացած կայազորն ուներ 300 հրանոթ), հրետանու հմուտ կիրառումը 1609 թվ. առանը Խողինկա գետի վրա հանդիպական մարտի մեջ, այլ և զարգացած հրետանային արդյունաբերությունը Մոսկվայում: Թնդանոթ ձուլելու գործն այնքան բարձր եր զրված, վոր զեռ մինչև մեր նկարսպած ժամանակը, 1586 թվին Մոսկվայում ուսւ վարպետ Անդրեյ Չոխովը ձուլեց

<sup>1)</sup> Ծայրամասային բնակչության մի առանձին խումբ եր, իր ունեցվածքային գրությամբ կալվածատերերին նման: Քաղաքապահ կազակները հաճախ իրենց մոտ ունեյին ճորտեր՝ կազակական չքավորներ:



Յար-թնդանոթը

նշանավոր Յար-թնդանոթը, վորը մինչև այժմ գտնվում է Կրեմլում:

Արկերից գործ եյին ածվում՝ ոռւմբերը, վոր ամենից շատ գործազրվում եյին հրասանդներից արձակելու համար, պայթուցիկ արկերը, վոր կոչվում եյին «հթարձակ վառողով սափորներ», և հրդինիչ արկերը: Վերջիններս լայնորեն ոգտագործեցին մուկովյան զորքերը Բոլոտնիկովի գեմ մղվող պայթարում:

Նյութական մասի սպասարկման և մարտում այն ոգտագործելու համար կային հատուկ հրետանային մասնագետներ՝ թնդանոթաձիգներ: Մի ամբողջ շարք վավերագրերից կարելի յեղանակ վար նրանցից մի քանիսներն իրենց գործի մեջ մեծ վարպետներ եյին: Այդ հմտությունը ձեռք եր բերվում համապատասխան ուսուցումով թնդանոթների վրա և պարբերաբար ստուգվում եր հրետագության թափափորական զորատեսներով: Անեղի որոք Մոսկվայում յեղած անգլիացի Զենկինսոնը մեզ տալիս ե հետաքրքիր նկարագրությունը մի այդպիսի զորատեսի, վոր կատարվել և իվան Անեղ թափափորի կողմից Մոսկվայի արվարձանում:

## ՏԱԿՏԻԿԱ

Յերթաշարժումները կատարվում եյին դանդաղորեն, որաշան 15 կիլոմետրից վոչ տվիլի վարպես կանոն՝ զորքը գնում եր ցամաքային ճանապարհով, ռազմամթերքը, պարենը, հրետանու նյութական մասը՝ «նարյաղը» և «գուլյայ-գորոդները»—հնարավորության զեպքում անդափոխվում եյին զետերով:

Յերթաշարժի ժամանակ առջից գնում եր «յարտոուլը», այսինքն՝ թեթև հեծելազորային ջոկատը, վորի դերն եր հետախուզել ճանապարհներն ու թշնամուն և զորքն ապահովել հակառակորդի անակնկալ հարձակումից:

«Յարտոուլի» յետերով գալիս եր «առաջապահ գունդը» (ավանդարզը), նրա յետերոց ըմեծ գունդը (գլխավոր ուժերը) «նարյաղով» (հրետանիով), «գուլյայ-գորոդներով» միասին և զրանց յետերոց սպահանական գունդը։ Շարժումն ապահովիլու համար աջից և ձախից նշանակիվում եյին «աջ» և «ձախ թերի» զնդերը, վորոնք շարժվում եյին «ձեծ զնդի» կողքերով՝ յերեմն զգալի հեռավորության վրա։

Չորքերը դիմերելու համար բանակ եյին զնում ջրառատ, անառառ և արտօներով հարուստ վայրերում։ Պետերի համար վրաններ եյին խորում, հասարակ զինվորներն իրենց համար հոլիկներ եյին շինում։

Հակառակորդին հանդիպելիս զնդերը շարժվում եյին մարտակարգով։ Այդուղ հետեակազորը բռնում եր կենտրոնը, իրեն պաշտպանելով «գուլյայ-գորոդներով», և, յեթև ժամանակը ներում եր, առջեն բնիած վայրն ուժեղացնում եր հողային կառուցումներով։ Հեծելազորը տեղափոխվում եր թեերը և առջեցվում, «նարյաղը» (հրետանին)՝ հետեակազորի հետեւում։

Մարտն սկսում եր հեծելազորը։ Յեթև նրա զրոնը հաջող եր, ապա նա իր առջեն արած թշնամուն հալածում եր, հետեակն ու «նարյաղը», շարժվելով նրա յետերոց, լրացնում եյին թշնամուն ջախջախումը։ Խոկ յեթե գրոնն անհաջող եր, հեծելազորը յետ եր արշավում զեպի իր հետեակը և մանաւմ նրա թեերի յետել։ Այդ զեպքում հարվածի ամրող ծանրությունն ընկնում եր հետեակազորի վրա։

Հետեակազորը ծածկվելով «գուլյայ-գորոդներով» և ոժան-

դակվելով յետեւում տեղափորված հրետանու կողմից, արխաբար զիմանում եր հակառակորդի զրոնին, մինչեւ վոր նրա յետեւում հեծելազորն իրեն կարգի յեր բերում, վորպեսողի շարքավորվի նոր զրոնի անցնելու համար։

Անհրաժեշտ է նշել զեկավարման հետաքրքիր ձևերը, վոր կիրառվում եյին մոսկովյան զորքի մեջ։ Յուրաքանչյուր պետի մոտ՝ թամբին կապում եր մի փոքրիկ թմբուկը վորը թըմբ-կահարելով, նա դեպի իրեն ել գրավում զորքերի ուշագրությունը և ատլիս անհրաժեշտ հրամանները։ Բացի գրանից, զորքի մեջ լինում եյին մեծ պղնձել թմբուկներ, «ահազանգեր», վորոնցից ամեն մեկի վրա նշանակում եյին յերբեմն ութ թմբեանար, նախապես մշակած կողի համաձայն այդ թմբուկները զարկելով, զորապետները զեկավարում եյին իրենց զորքերը։

Ուստիները մեծ վարպետներ եյին բերդեր պաշարելու և զրանք հակառակորդից պաշտպանելու գործում, ինչպես այդ մասին վկայում ե Կազանի պաշարումն ու գրոհը 1652 թվին իվան Ահեղի զորքերի կողմից և Սմոլենսկի պաշտպանությունը 1609—1611 թվերին Շեին զորապետի կողմից։

Մոսկովյան զորքի մեջ ինժեներական գործը նույնպես զարգացած եր։ Ամրացված կետերի և «գուլյայ-գորոդներից» ամբողջ տեղամասերի ստեղծելը, առջեւմ ընկած վայրը հողային կառուցմներով ուժեղացնելը (մի տեղում տեղափորվելիս), կամրջաշինական և գետանցման գործը—այդ ամենը կրում եր ինքնորինակ բնույթ, և լայնորեն զործադրվում եր այն ժամանակված մոսկովյան զորքի մեջ։

Զի կարելի չնշել կովի կուտա ժողովրդական միջոցները, վորոնք ծագում եյին վաճակի ըովելին հենց մարտի գաշտում։ Մենք դրանց շարքը պիտի զամենք թեթև խրամատները, վոր լայնորեն կիրառվում եյին Բոլոտնիկովի զորքի մեջ, նրա նշանակով «վագենբուրգները» կազմված իրար վրա զրված սահնակներից, վորոնց վրա ջուր եյին լցնում և վերջինը ցրտում սառչում եր և այն։

Պայքարը ծնում եր նոր տակտիկական ձևեր, պատերազմն առաջ եր քաշում նոր առաջնորդներ, վորոնք կովի գաշտում հմտորեն զեկավարում եյին զորքերին։

ՅԵՐՐՈՐԴ ԼԵԶԱԿԱՆ ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱՆ  
ԼԵԶԱԿԱՆ ՍԻԳԻԶՄՈՒՆԴ ԹԱԳԱՎՈՐԻ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ

Մոսկվայի պետության սահմաններում յեհական պաների նախորդ յերկու ինտերվենցիաների տապալումը նրանց յետ չըկանգնեցրեց յերրորդից, վորն ամենից ավելի լուրջ փորձն եր այդ ուղղությամբ:

Կարծելով, թե Մոսկվայի պետությունը կործանման յեղքին և կանգնած, լեհական թագավոր Սիգիզմունդ III-ը վորոշեց արշավանք գործել Մոսկվայի վրա, վորապես ուսւական յերկը ները միացնի իր տիրապետություններին:

1609 թվին անցներով ուսւական սահմանը, նա դիմեց բնակչությանը մի հատուկ հրովարտակով, վորտել գրում եր, թե վերջին ոյուրիկովիչի՝ Ֆյոդոր ցարի մահից հետո Մոսկվայի թագավորներ դարձան վոչ թագավորական ցեղի մարդիկ (Գոդունովը և Շույսկին) և վոչ թե աստծո հաճությամբ, այլ սեփական կամքովց բռնությամբ, խորամանկությամբ և խարեցությամբ, վորի պատճառով յեղբայրը-յեղբոր գեմ, բարեկամը բարեկամի գեմ դուրս յեկան, վոր Մոսկվայի պետության և մինչև անգամ հենց Մոսկվայի մեծ, փոքր ու միջակ մարդկանցից շատերը, տեսնելով այլպիսի կործանումը, խոնարհարար ինքըցին իրեն՝ Սիգիզմունդին, վոր նա, իբրև քրիստոնեական թագավոր և Մոսկվայի պետության ամենամոտ ազգակից, կատարի մոսկովյան բնածին, հին թագավորների հետ ունեցած բարեկամությունն ու յեղբայրությունը, խղճանքանց կործանվող պետությանը: Յեվ ահա նա, Սիգիզմունդը, ինքը զալիս և մեծ դորքով վոչ թե նրա համար, վոր ուսւական արյուն թափի, այլ վորպեսզի պաշտպանի ուսւամարդկանց, ամենից ավելի ջանալով ուսւական ուղղափառ հավատի պահպանման համար:

Բայց այդպիսի հայտարարությունը ուսւամարդկանցից վոչ վոքի չի կարող խարել:

Առաջին ուսւական քաղաքը, վոր կանգնած եր Սիգիզմունդի ձանապարհին, Սմոլենսկը՝ նրան լուրջ դիմադրություն ցույց տվեց և Սիգիզմունդն ստիպվեց յերկարատես պաշարել ու իր ամբողջ ուժերը լարել, վորապես քաղաքը վերցնի:

Սմոլենսկը, վոր տեղավորված և Դնեպր գետի ձախ բարձրագիր ափին, պատված եր հոծակուռ քարե պատով, վորը գրանից վոչ շատ առաջ շինված եր ուսւական վարպետ՝ բերդեր կառուցաղ Ֆյոդոր Կոնի գծագրերի և պլանների համաձայն: Գրավելով մոտավորապես 6 կիլոմետր շրջագիծ, պատն ուներ 12-ից մինչև 15 մետր բարձրություն, մինչև 5 մետր հաստություն, 38 աշտարակ, վորոնցից 9-ը վերգարպասային եյին: Քաղաքը ուղղամթերքով ու պարենով բավարար չափով մատակարարված եր: Բերդային թնդանոթները մոտ 300 հատ եյին, բայց կայազորը սակավաթիվ եր՝ 4000 մարդուց վոչ ավելի: Բերդապետն եր զորապետ Շերնը:

Բերդը պաշտպանելու համար Շերնը կայազորի կեսը թողեց քաղաքի ներսում, մյուսը բաժանեց 38 առանձին ջոկատների, վորոնցից յուրաքանչյուրին հանձնեց պատի վորոշ տեղամասի և նրան կից աշտարակների պաշտպանությունը: Պաշտպանության հարմարության համար պաշարվածներն այրեցին քաղաքին մոտ յեղած բոլոր արքարքանները և ավելացրին պատերի ամրությունը լրացուցիչ հողաթմբերով:

Սմոլենսկի տակ լեհերի ուժերը հասնում եյին մինչև 17.000 մարդու, շուտով նրանց միացան նաև 30.000 կազակներ, և այժմ ուժերի հսկայական գերազությունը լեհերի կողմն եր: Այնուամենայնիվ թագավորական հետման ժոկվուսկին Սիգիզմունդին խորհուրդ չեր տալիս գրոհելու Սմոլենսկը, ցույց տալով այդպիսի ձեռնարկության անհուսալի լինելը, յերբ Սմոլենսկի բերդի կառուցումները հղոր են և պաշարողները չունեն ծանր հրետանի:

Բայց Սիգիզմունդը հրամայեց ուժբակոծությունն սկսել թեթև թնդանոթներով և պարապահար մեքենաներով՝ տորպետներով: Ի հարկե, այդ ձեռնարկումից բան դուրս չեկալ: Ժոկվուսկին առաջարկում եր Սմոլենսկը թողնել լեհական աննշան ուժերի հսկողության տակ, իսկ մնացածով շարժվել Մոսկվայի վրա, բայց Սիգիզմունդը համառում եր Սմոլենսկը վերցնելու եր մտազրության մեջ: Վորովհետեւ ձմեռը վրա յեր համառում, վորքերին հրամայվեց անցնել ձմեռային զրության, իսկ Սիգիզմունդը Սիգիզմունդը բերել ավել հղոր պաշարողական թնդանոթները:

Սմոլենսկի պաշարումը յերկարեց։ Ինդհանուր հաշվով Սիգիմունդը Սմոլենսկի տակ կանգնեց մի տարի և ութ ամիս Պաշարվածների թշրիւթյունները, նրանց մեջ զարգացած հիվանդությունները չտառանեցին սմոլենսկյիների արիւթյունը հայրենի քաղաքի պաշտպանության մեջ։ Քաղաքի զրավման համար իհերը պարտական են զավաճանությունը։ Լեհական լանտեկի կողմն անցնողը լեհերին ցույց տվեց պատում յեղած թույլ տեղը՝ նրա արևմտյան մասում։ Այդուղ դրվեցին պարիսպ քանդող մեքենանեցը, Պարիսպը քանդվեց։ Իհերը նետվեցին ձեղբածքի մեջ, սմոլենսկյիները յուրաքանչյուր տուն ու փողոց պաշտպանում եին լեհերից։ Առանձնապես արյունալի կորվ բորբոքեց Սմոլենսկի գլխավոր միջնաբերդի՝ Սորունայա գորկայի մոտ։ Նրա առջեի խրավանդն ամբողջ լցվեց զիակներով։ Մինչեւ այժմ այն փողոցը, վոր այդ խրավանդի ուղղությամբ և անցկացված, կոչվում է Ռեզնիցկայա<sup>1)</sup>։ Սմոլենսկի պաշտպանները, վոր հավաքված եին Սորունայա գորկայի շրջանում, չցանկանալով անձնատուր լինել լեհերին, իրենք իրենց ողը ցնողներին յիկեցաւ նկուղներում գարսված ուղմամթերքի հետ միասին։ Շեինը, վոր այդ ժամանակ պաշտպանության մի ուրիշ անդամանումն եր, գերի վերցվեց և տանջանքի յենթարկվեց վորից հետո ուղարկվեց Լիտվա։

Շեինի և սմոլենսկյիների անվեհեր վարքը Սմոլենսկի պաշարման ժամանակ յեղակի յերեվույթ չեր Մոսկվայի պետության ուղմական պատմության մեջ, անսահման քաջության և անվեհերության բազմաթիվ աշքի ընկնող որինակներ ցույց տվին ուուսներն այդ պատերազմի ընթացքում։ Վկայակոչենք թեկուզ այն որինակը, յերբ մոսկովյան զորքն անցավ Դեսնան սառցահոսանքի ժամանակի։ Այդ գետանցութը ձեռնարկվեց 1607 թվին պաշարված Բրյանսկին ոգնելու համար։

Մոսկովյան ջոկատը Բրյանսկին մոտեցավ սառցահոսանքի պահին։ Գետի հակառակ կողմից լսվում եին բրյանսկյիների հուսահապական ճիշերը, վորոնց պաշարել եին յերկրորդ ինքնակոչի զորքերը։ Զնայած այդքան բարդ պայմաններում գետն անցնելու բացառիկ զժվարությանը, մոսկովյան ջոկատը ձիեւ

<sup>1)</sup> Ռեզնիցկայա—սպանդային։ —Ծանոթ. թարգմ.։

րով համարձակորեն նետվեց ջուրը, անցավ գետը, խիեց ինքնակոչի զորքերին և քշեց Բրյանսկից հեռու։

Այս որբնակները և զորքերի հմուտ ոգտագործումը կովի զաշում ասում են այն մասին, վոր ոսւս մարդիկ և վիճակի ելին պաշտպաներու Մոսկվայի պետությունը հեղեղած լինական հափշտակիչներից։ Դրա համար հարկավոր ելին՝ նրանց, միաբանությունն ընդհանուր թշնամու դեմ, բավարար ուժերի և միջոցների հավաքում և փորձված զեկավարներ, ժողովրդական աշխարհազորի առաջնորդներ։

Այդպիսի համախմբման գաղափարը ծագեց Մոսկվայի պետության արևելյան և հյուսիսային քաղաքներում, վորոնք աշխիք քիչ ելին աղերգած լինական արշավանքից և այդ պատճառով եւ վորոշ հնարավորություններ ունելին պայքարելու լիների գետ։

## ՈՒԺԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԼԵՂԱԿԱՆ ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱՅԻ ԴԵՄ ԹԱՅՔԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Մկղբնապես հյուսիսային քաղաքներում կազմակերպվում են կամավորական պարտիզանական ջոկատներ։ Մինք այդ ջոկատները տեսնում ենք հյուսիսարևելյան Ռուսիայի շատ քաղաքներում՝ Յուրյեվից՝ Պովոլյսկի գավառում — հարյուրապետ Ֆյոդոր Կրասնիի գլխավորած ջոկատը, Բալախնայում ջոկատի պետներու Կուվշիննիկովը, Գորոխովցեցի գավառում՝ Ֆյոդոր Նազովիցինը, Խուլույում՝ Իլյա Դեսնիկինը և այլն։ Այդ բոլոր ջոկատները «ջարգում ելին լիտվական մարդկանց (լեհերին)», բունության և իրենց յերկրի ավերման փոխարեն հատուցելով նրանց։

Դերմանացի Բուսսովը, վոր այդ ժամանակ յեղել և Մոսկվայի պետության մեջ, իր հուշերում պատմում ելեհական բռնացողների նկատմամբ ուսւաների չափազանց գաղազած վերաբերմունքի մասն «Ժողովությունը վրեժ առավ լեհերից (խոսքը վերաբերում եւ Վոլգայի վրա Խայտառակություններ անող լեհական ջոկատի ջախջախմանը)։ Վումանց կախեցին, ուրիշներին խողողեցին, իսկ մի քանիսներին գցեցին սառցածակերն այսպիսի խոսքերով».

«Հերիք եւ լավիք մեր կովերն ու հորթերը. Գնացեք վուզայի մեջ  
մեր ձուկը բանեք»:

Նկարագրված ջոկատների նման ջոկատներ կային նաև  
Գալիչում, Կոստրոմայում, Վոլոգդայում, Բելոռուսում, Ռւսա-  
տյունայում, Գորոդեցում, Վիշնի-Վոլոչեկում, Կաշինում և այլ  
քաղաքներում:

Այդպիսի ջոկատների կազմակերպման հողի վրա քաղաք-  
ների միջև աշխույժ հարաբերություններ հաստատվեցին. նա-  
մակներ եյին ուղարկում միմյանց՝ կոչ անելով պաշտպանել  
հայրենի հողը: «Իսկ չեք հոգ տանի այդ մեծ զործի մասին,—  
ասվում ե այդպիսի նամակներում,—ապա դուք աստծուց և թա-  
գավորից չեք խռասափի»:

Նույն վրոգի եկ նովկորոցիները գրում եյին բարախնին-  
ցիներին. «Վորպեսզի մենք մեկ մաքի լինենք . . . վորպեսզի  
անմեղ արյուն չթափվի. ով վոր կլինի Մոսկվայի պետության  
վրա թագավոր, նու ձեզ և մեկ բոլորիս համար թագավոր ե»:

Յերբեմ այդ նամակներն ուղարկվում եյին մի քաղաքից  
մյուս՝ ինդքելով ուղարկել գրանք յերրորդ քաղաքը և այլն:  
«Միայն արմատի վրա հիմքն ամուս կլինի, ապա և ծառն ան-  
շարժ ե. իսկ յեթե արմատ չլինի, ապա ինչին կպչի»—ասվում եր  
այդպիսի նամակներից մեկում: Դրանով մատնանշվում եր Մոս-  
կվան վորպես արմատ, վորը պետք ե թշնամիներից մաքրված  
և ամուս լինի:

## ՄՈՍԿՎԱՅԻ ԴՐՈՒՅՑՈՒՆԸ

Մինչդեռ այդ ժամանակ Մոսկվայում տեղի յեր ունենում  
էետելյալը: «Տուշինոյի գողը» շարունակում եր կանգնած մնալ  
նախկին տեղում, սպանալով մայրաքաղաքին: Հյուսիսից շարժ-  
վում եր այնտեղ զորքեր հավաքած Սկոպին-Շույսկին: Նա դե-  
պի Մոսկվա յեր առաջնորդում ուուների հետ միասին նաև դաշ-  
նակից շվերական ջոկատը:

Ռուսական հողի վրա շվերների յերեվալը նշանակում եր,  
մի կողմից՝ Մոսկվայի պետության սահմանները ինտերվենտու-  
ների նոր ջոկատի ներխուժում, սկզբում դաշնակցի անվան տակ  
մյուս կողմից՝ նա ցույց է տալիս ուստական բոյարության վա-

ճառելլությունը, վորն ամեն մի գնով գնում եր իր իրա-  
վունքները գյուղացիներին շահագործելու վերաբերմամբ:

Զախճախելով բոլոտնիկովի գյուղացիական զօրքը և նատ-  
րավարություն չունենալով իր ուժերով գլուխ հանել լեհական  
ինտերվենտներից, Շույսկիի բոյարական կառավարությունը  
շվերներին ունության կանչեց, վորպեսզի նրանց հետ միացած  
վերջացնի պայքարը լիների և այն գյուղացիների գեմ, վորոնք  
զեռ տեղատեղ ինքնակոչին իրենց թագավոր եյին ճանաչում:

Դե-Լազարդիի շվերական ջոկատում, վորը Մոսկվայի պետու-  
թյան մեջ յերեաց իբրև զաշնակից, վարձկան գերմանացիներ շատ  
կային: Թե շվերները և թե գերմանացիները, մանելով Մոսկվայի  
պետության սահմանները, լեհական պահների նման հույս ունե-  
յին այստեղ ոգուտ ստանալ «հիվանդ մարդու» հաշվին, վորպե-  
սին այն ժամանակ հանդիսանում նոր Մոսկվայի պետությունը;  
Շվերներն ու գերմանացիները հետո դուրս յեկան ուուսական  
հողի հենց նույնպիսի հափշտակիչներ, ինչպես վոր լեհերն  
եյին:

Միգիգունդի արշավանքը դիպի Մոսկվա շեղում եր տուշի-  
նոյի լեհերի ուղարկությունը «գողից», Խոզինկայի վրայի ջար-  
դըն այստեղ այլևս ողուտաներ չիր խոստանում նրանց. լեհական  
պահներն սկսում են ավելի ու ավելի կողմնորոշվել դեպի յերրորդ  
ինտերվենտիցի կազմակերպիչը՝ դեպի թագավորը և հետզհետե,  
ինչպես խորտակվող նավի առնետանք՝ անցնում են նրա կողմը:

Այս բոլորը մեծ/քայքայում առաջացրեց ինքնակոչի տու-  
շինոյի զորքերում: Նրա զրությունը դառնում եր վոչ միայն  
անհաստատ, այլև գտանգավոր: 1609 թվի ծմբանը ինքնակոչը,  
գյուղացու հեջ ծառված, Տուշինոյից փախազ կարու-  
աց: Մոսկվան ազատվեց Տուշինոյի բանակից, վորը նրան 2  
տարի և իննը ամիս մշտական տագնապի մեջ եր պահել 1610  
թվի մարտի 12-ին Սկոպին Շույսկին իր զորքի գլուխն անցած,  
դաշնակցից շվերական ջոկատի ուկելցությամբ, մտավ Մոսկվա:  
Թագավորի զեմ զեպի Սմոլենսկ արշավանք եր սպասվում: Բայց  
յերիտասարդ զորագարն անսպասելիորեն հիվանդացավ և մեռավ:  
Հետո ասում եյին, թե նրան թունավորնել են, նախանձելով նրա  
մեծ հաջողություններին:

Լեհերի գեմ արշավանքը կազմակերպից թագավորի յնդ-

բոր, անշնորհք ու զոռող Դմիտրի Շույսկիի գլխավորությամբ:  
Հակառակորդի հետ հանդիպումը տեղի ունեցավ 1610 թվի հունիսի 24-ին, Կրուշին գյուղի մոտ, Մոժայսկից վոչ հեռու: Բորբոքվեց տաք կոխի, վորտեղ ուստական զորքերը լիակատար պարտություն կրեցին: Պարտության պատճառ ծառայեց գերմանացիների և շվեդների գավաճանությունը, վորոնք վճռական ըստեցին անցան հակառակորդի կողմը: Արտահայտվեց նաև գլուխավոր հրամանատար Շույսկիի անշնորհքությունը:

Մոսկվայի ճանապարհը լիների համար բաց եր: Լինական զորքերին գլխավորող հետման ժողովսկին շարժվեց գեպի Մոսկվա, այնտեղ ուղարկելով հրովարտակներ, կոչ անելով յերգում տալ նոր թագավորին՝ Սիգիբունդի վորդի Վլադիմարվին և տապալել Վասիլի Շույսկի թագավորին:

Հրովարտակներն ունեցան իրենց ազգեցությունը: Բոյարները գահընկեց արին Շույսկիին, բանի կերպով նրան ձեռնարկեցին արեղա և ուղերդվեցին թագավորի բանակը: Բոյարների դեսպանությունը խնդրում էր Սիգիբունդի վորդի Վլադիմարվին Մոսկվայն թագավորության գահը նստելու համար: Ժողովսկին իր կորքով մոտեցավ Մոսկվային և բանակ գրեց Կարամիշեկո գյուղի մոտ: Մյուս կողմից, Նեկոլո-Ուգրեշսկիի վանքին մուտքան ինքնակոչի և Սապեգայի ջոկատները: Այդ ժամանակ Մոսկվայում գտնվում էր Մոսկվայի զորքի մի զգալի ջոկատ: Ժողովսկին շատ ճարպիկ և խորամանկ ձեռվ զործեց այն ուժերի գեմ, վորոնք կարող եյին նրան խանգարել Մոսկվայի միանձնյա տեր զառնալու:

Վորովհետև ուռւաների նախկին դաշնակեց շվեդներն այդ ժամանակ գրավել եյին նովկորողը, ժողովսկին բոյարական խորհրդաբանին (գումա) համոզեց ուղարկելու Մոսկվայում գտնվող 18,000 մարդուց բաղկացած ջոկատը, վորպեսզի շվեդներին վանդան նովգորոդյան յերկրից: Սապեգային նա համոզեց հեռանալու Մոսկվայի մոտերքից՝ Սիգերսկի յերկրը զավթելու համար: Ինքնակոչն առանց Սապեգայի զորքերի դարձավ չնչին մեծություն: Ժողովսկին իր հաշիվներում նրան նույնիսկ նկատի չեր առնում:

Այն պատրվակով, թե մոսկվայն ուսմիկներն ինքնակոչի կողմից են և բոյարների համար զտանդավոր և Մոսկվայում

առանց զինված ուժի մնալ, Ժողովսկին 1610 թվի սեպտեմբերի 20-ի լույս 21-ի գիշերը ծածուկ կերպով Մոսկվա մացրեց 800 հետևակ գերմանացի և 3500 լին: Նա ինքը հետևակազորի հետ տեղավորվեց Կրեմլում, մի գունդ զրեց կիտայցորդում, մյուսը՝ Բելի-զորողում կրեմլյան, այդմյան Տրոիցիկի, դարպանակերի զիմաց:

Այսպիսով Մոսկվան զավթեցին ոտարերկրացիները, և մոսկվիները, 1610 թվի սեպտեմբերի 21-ի առավոտն արթնաւալով, լինական ինսերվենտների գերին յեղան: Ինտերվենտների անարգունքներն ու վիրավորանքները յիշկար չստիպեցին սպասել: Ինտերվենտների թիվը Մոսկվայում որեց որ ավելանում էր: Նրանք բացահայտորեն թալանում եյին ժողովրդին, ամեն կերպ սահմանափակում եյին նրա կյանքը: Գոնսեվսկիին, վորին ժողովուկին նշանակել եր Մոսկվայի կառավարիչ իրեն պահում էր ինչպիս նվաճված յերկրում: Բոյարական խորհրդաբանը ֆիկցիա յեր: Մոսկվայի պետության բոլոր զործերը միանձնաբար տնօրինում էր Գոնսեվսկիին:

Վախենալով մոսկվյան բնակիչների ապստամբությունից, Գոնսեվսկիին ուռւա մարդկանց արգելց որերով ման դալը: Նրա հրամանով առևտրականներից խլում եյին կացինները, վոր նրանք հաշնում եյին վաճառելու: Կացինները խլում եյին նաև հյուսներից, նում եյին կացիններով աշխատանքի եյին գնում: արգելված յեր նրանք կացիններով զենքի պակասությունը կարող է զինվել բրերով, լեհերն արգելցին Մոսկվայի մեջ ժանր փայտ բերելը: Դրա հետ միասին, առանձնապես յերեկոներին, փողոց դուրս զախ անապահով եր, լեհերն առանձնապես կպչում և վիրավորում եյին կանանց:

Այս բոլորը, միասին վերցրած, լեհերի զեմ առաջ բերեց վրդովմունքի պոոթկում, վորը բացահայտ ապստամբության ձև ընդունեց 1611 թվի մարտի 19-ին:

Այդ որն առավտվանից ամեն ինչ սովորականի պես երընթանում՝ Մոսկվայն առևտրականները բացին իրենց կրպակները, արենստավոր ժողովուրդը կանոննեց իր աշխատանքին: Միայն շուկաներում ժողովրդի մեջ կուտակում եր նկատվում, և բոլոր փողոցներում ամեն տեսակ սայլերի արտասովոր շատություն եր յերեռում: Լեհերը, կոահելով, վոր այսեղ ուռւա-

բոր, անշնորհք ու զոռող Դմիտրի Շույսկիի գլխավորությամբ:  
Հակառակորդի հետ հանգիպումը տեղի ունեցավ 1610 թվի հունիսի 24-ին, Կլուշինո գյուղի մոտ, Մոժայսկից վոչ հեռու: Բորբոքվեց տաք կոխի վորտեղ ուստական զորքերը լիակատար պարտություն կրեցին: Պարտության պատճառ ծառայեց գերմանացների և շվեդների զավաճանությունը, վորոնք վճռական ըստիցին անցան հակառակորդի կողմը: Արտահայտվեց նաև գըլ-խավոր հրամանատար Շույսկիի անշնորհքությունը:

Մուկվայի ճանապարհը լիների համար բաց եր: Լինական զորքերին զիլավորող հետման Փոլկովսկին շարժվեց դեպի Մոսկվա, այստեղ ուղարկելով հրովարտակներ, կոչ անելով յերգում տալ նոր թագավորին՝ Սիգիզմունդի վորդի Վլադիմարին և տապահել Վասիլի Շույսկի թագավորին:

Հրովարտակներն ունեցան իրենց ազգեցությունը: Բոյար-ները գահնենից արին Շույսկին, բոնի կերպով նրան ձեռնաշրեցին արեղա և ուղեորդեցին թագավորի բանակը: Բոյարների դեսպանությունը խնդրում եր Սիգիզմունդի վորդի Վլադիմարին Մոսկվայան թագավորության գահը նստելու համար: Փոլկովսկին իր կործով մոտեցավ Մոսկվային և բանակ դրեց Կարամիջնկողուուկի մոտ: Մյուս կողմէց, Նիկոլո-Ուգրեշսկիի վանքին մոտեցան ինքնակոչի և Սապեգայի ջոկատները: Այդ ժամանակ Մոսկվայում գտնվում եր Մոսկվայի զորքի մի զդալի ջոկատ: Փոլկովսկին շատ ճարպիկ և խորամանկ ձեռվ զործեց այն ուժերի դեմ, վորոնք կարող եյին նրան խանդակարել Մոսկվայի միանձնյա տեր զառնալու:

Վորովհետև ուռւանիրի նախկին դաշնակից շվեդներն այդ ժամանակ զրավել եյին նովգորոդը, Փոլկովսկին բոյարական խորհրդարանին (գումա) համոզեց ուղարկելու Մոսկվայում գտնվող 18.000 մարդուց բաղկացած ջոկատը, վորպեսզի շվեդներին վոնդին նովգորոդյան յերկրից: Սապեգային նա համոզեց հեռանալու Մոսկվայի մոտերքից՝ Սեվերսկի յերկրը զավթելու համար: Ինքնակոչն առանց Մապեգայի զորքերի գարենքի գարձավ չնշին մեծություն: Փոլկովսկին իր հաշիվներում նրան նույնիսկ նկատի չեր առնում:

Այն պատրվակով, թե մոսկովյան ռամիկներն ինքնակոչի կողմէց են և բոյարների համար վտանգավոր և Մոսկվայում

տուանց կինզած ուժի մնար, Ժոլկովսկիին 1610 թվի սեպտեմբերի 20-ի լույս 21-ի գիշերը ծածուկ կերպով Մոսկվա մացրեց 800 հետեւակ գերմանացին և 3500 լին: Նա ինքը հետեւակաղործի հետ տեղավորվեց կրեմլում, մի գունդ զրեց կիտայ-գորոդում, մյուսը՝ Բելի-գորոդում կրեմլյան, այդմյան Տրոիցիկի, զարպասների գիմաց:

Այսպիսով Մոսկվան զավթեցին ոտարերկրացիները, և մոսկովցիները, 1610 թվի սեպտեմբեր 21-ի առավոտն արթնաւնալով, լինական ինտերվենտների գերին յեղան: Ինտերվենտների անարգանքներն ու վիրավորանքները յերկար չստիպեցին սպասել: Ինտերվենտների թիվը Մոսկվայում որեց որ ավելանում եր: Նրանք բացահայտորեն թալանում եյին ժողովրդին, ամեն կերպ սահմանափակում եյին նրա կյանքը: Գոնսեկվսկին, վորին Փոլկովսկին նշանակել եր Մոսկվայի կառավարէչ, իրեն պահում եր ինչպիս նվաճմած յերկրում: Բոյարական խորհրդարանը ֆիլցիա յեր: Մոսկվայի պետության բոլոր զործերը միանձնելուր տնօրինում եր Գոնսեկվսկին:

Վախենալով մոսկովյան բնակիչների ապստամբությունից, Գոնսեկվսկին ուռւա մարդկանց արզելից օրերով ման գալը. նրա հրամանով առևտրականներից խլում եյին կացինները, վոր նրանք հանում եյին վաճառելու: Կացինները խլում եյին նաև հյուսներից, յերբ նրանք կացիններով աշխատանքի եյին դնում: արգելված եր դանակ կը ելը. վախենալով, վոր ժողովաւրդը զենքի պակասության պատճառով կարող է զինվել բըրերով, լիներն արգելցին Մոսկվայի մեջ մանը փայտ բերելը: Դրա հետ միասին, առանձնապես յերեկոններին, փողոց դուրս գալն անապահով եր. լիներն առանձնապես կաջում և վիրավորում եյին կանանց:

Այս բոլորը, միասին վերցրած, լիների զեմ առաջ բերեց վրդովմունքի պոութկում, վորը բացահայտ ապստամբության ձև ընդունեց 1611 թվի մարտի 19-ին:

Այդ որն առավոտվանից ամեն ինչ սովորականի պես եր ընթանում՝ Մոսկվայան առևտրականները բացին իրենց կրպակները, արհեստավոր ժողովուրդը կանգնեց իր աշխատանքին, միայն շուկաներում ժողովրդի մեծ կուտակում եր նկատվում, և բոլոր փողոցներում ամեն տեսակ սայլերի արտասովոր շատություն եր յերեւում: Լիները, կոահելով, վոր այստեղ ուռւա-

Ներն ինչ-վոր բան են սարքում և սայլերն ոգտագործվելու յեն բարիկադների համար, սկսեցին սայլերն ուղարկել Կրեմլ և կրտայ-գորոգ՝ թնդանոթներ տեղափոխելու։ Խուսներն այդ բանին չեյին համաձայնվում։ Սկսվեց փոխազարձ հայոցյանք, վորը փոխվեց կռվի։ Լեհերը զենք գործազրեցին։ Խուսները բոլոր յեկեղեցիներու ժանապանդ խփեցին։ Ամենով Մոսկվան վատրի յելավ։ Ժողովուրդը նետվեց գեպի բեկի բեկի գորոգ։ Եհեներն ու գերմանացիք ել այնտեղ նետվեցին։ Սկսվեց մի սոսկալի կոտորած։

Ահա այդ ինչպես և նկարագրում ականատես լին Մասկե-  
վիչը<sup>1</sup>):

«Մարտի 29-ին (Յին տոմարով 19-ին.—Ն. Պ.), չարչաւրանաց շաբաթվայ յերեքշաբթի որը, սկզբում կոխվն սկսվեց կիտայ-գորոդում, փորտեղ շուտով մերոնք կոտորեցին առետրական մարդկանց<sup>2</sup>) (այն տեղ մինչև 40,000 կրաքահներ<sup>3</sup>) կար) հետո՝ Բելի-գորոդում. այստեղ գլուխ յենիկն ավելի գժվար եր, այստեղ ավանն ավելի ընդարձակ և և ժողովուրդն ավելի. ուազական։ Ռուսներն աշտարակներից իջեպին դաշտային թնդանոթները և, զրանք տեղավորելով փողոցներում, կրակ եյին թափում մեր վրա։ Մենք նրանց վրա հարձակվում ենք նիզակ-ներով, իսկ նրանք փողոցն անմիջապես փակում են սեղաններով, զգրոցաթախտերով, փայտերով. մենք նահանջում ենք, փորպեսզի նրանց դուրս քաշենք պատնեշի յատեկց, — նրանք հետապնդում են մեզ, ձեռքերին բռնած բերելով սեղաններն ու զգրոցաթախտերը, և հենց վոր նկատում ենք վոր մենք մտադիր ենք կովի գիմելու, անմիջապես փակում են փողոցը և իրենց ցանկալաւաների պաշտպանության տակ մեզ վրա հրացաններ են արձակում. իսկ մյուսները, պատրաստված լինելով, տանիքներից և ցանկալաւաններից, պատուհաններից մեզ խփում են պատրուգավոր հրացաններից, զպրառում են քարիր, մահակ . . .

Ամեն կողմից մեղ դաժանորեն հարվածում եյին թնդառաթներից, վորովհետև փողոցների նեղության պատճառով մենք

<sup>1)</sup> Սուտարյալով, ժամանակակիցների պատմվածքը հնգնակոչ Դմիտրիի մասին։ Մակերիչչի որպատճերը։

<sup>2)</sup> Կոտորվեցին մենչև 7000 անդեն ռուսներ:

<sup>8)</sup> Նստարաններ, վորոնց վրա առևտրականները դարսում ենին իրենց ապրանքները:

բաժանվել ելինք չորս թե վեց ջոկատի: Մեզնից ամեն մեկի  
բանը թունդ եր: Մենք չելինք կարողանում են ջգիտելինք, թե  
ինչ հնար գանհնք, վոր մեղ ողնինք այդպիսի փորձանքում,  
յերբ հանկարծ ինչ վոր մեկը բզավեց. «Կրակ: Կրակ: Վառիք  
աները . . .»: Հրդեհն սկսվեց և սուսներին քշեց զարաններից . . .  
Մյուս որը հրաման տրվեց վասել ամբողջ քաղաքը, վորտեղ  
վոր միայն կարելի յէ . . . Բոցը շրջապատեց տները և, բոր-  
բոքվելով խիստ քամուց, քշում եր սուսներին . . . Ամբողջ մայ-  
քաքաղաքն արդեն բոցավառվում եր: Հրդեհն այնքան կատաղի  
յեր, վոր գիշերը կրեմլում լույս եր, ինչպես հենց պայծառ որը  
յեր, վոր գիշերը կրեմլում լույս եր, ինչպես հենց պայծառ որը  
յեր, այրված աներն այնպիսի սարսափելի տեսք ունեցին և այն-  
իսկ այրված աներն այնպիսի սարսափելի տեսք ունեցին և այն-  
պիսի գարշաճուռթյուն եյին արձակում, վոր Մոսկվան կարելի  
յեր հմանեցնել միայն գժուխքին, ինչպես այն նկարագրում են:  
Մենք այն ժամանակ անվտանգ եյինք՝ կրակը մեղ պաշտպա-  
նում եր . . .»

Բայց մոսկվյան հրդեհի հրացոլքն ավելի պայծառորեն լուսավորեց ոռու մարդկանց գիտակցությունը և նրանց ցույց տվեց իրենց ուժերի շուտափույթ կազմակերպման անհրաժեշտ պահեց իրենց ուժերի գեմ պայքարելու և նրանց վրանց Մոսկվայի պետության սահմաններից:

ԿՈԶՄԱ ՄԻՆԻՆԻ ԿՈԶԸ

1611-րդ տարին, չնայած Մոռկվայի բնակիչների հերոսական յերուաթին, Մոռկվայի պետությանը չազատեց Եհենարիստական հարողներից։ Նրան չկարողացավ ազատել նաև հարավային քաղաքների ժողովրդական աշխարհազորը, վորը Մոռկվային մտեղագափ Լյապունովի գլխավորությամբ։ Լյապունովի զորքի մեջ համերաշխություն չկար։ Նա կազմված եր յերկու տարբեր տեսակի մասերից՝ զեմշչինայից—ուղմակներից, վորոնք հավաքված եին ուռւսական յերկրներից, և կազակներից, վորոնք առաջ ծառայել եյին «Տուշինոյի գողին»։ Զեմշչինայի առաջնորդն եր Լյապունովը, կազմակների առաջնորդն եր Զարուցկին։ Աշխարհազորի յերրորդ գլխավորը՝ Տրուբեցկոյը մեծ իրավունքներ չուներ վոչ զեմստվոյականների, վոչ ել կազակների վերաբերմամբ։

Եյապունսպի և Զարուցկիի միջև բացարձակ պայքար եղ

գնում: Այդ պայքարը նվազեցնում և աշխարհազորի հաջողությունները Մոսկվայի պետությունն ուսարելուց հափշտակիչներից ազատելու գործում:

Լյապունովի և Զարուցկիի միջև յեղած յերկառակություններից ոգավեցին լիները: Նրանք կազմակերին լարեցին Լյապունովի գեմ, վորը խստօրեն խափանում եր ամեն մի ինքնազմություն նրանց շարքերում:

Լյապունովի անունից կազմվեց մի կեղծ գրություն, վորը կոչ եր անում Մոսկվան ազատելուց հետո կոտորել ու խեղդել կազմակերին:

Լիների պրովակացիան հաջողվեց: Կազմակերն սպանեցին Լյապունովին, և նրա աշխարհազորը հեռացավ Մոսկվայի տակից և ցրվեց: Այդ ուժեղացրեց լիներին, վորոնք դրա չնորհիվ հնարավորություն ստացան տվելացնելու Մոսկվայում գտնվող իրենց կայազորը:

Բայց լիները թշնամի քաղաքում հստելով և ավերված յերկրեց չունենալով իրենց համար ամեն մի անհրաժեշտ բանի հայթայթում, Մոսկվայում պարենի և սպամամթերքի կարոտություն եյին քաշում: Արևուտքից նրանք ոգնություն ստանում եյին անկանոն կերպով և այնպիսի քանակությամբ, վոր լին չեր ապահովում յեղած պահանջը:

Մինչեւ Մոսկվայից գեղի արևելք և հյուսիսարևելք բարձրանում եր նոր ժողովրդական աշխարհազորը, նրա կազմակերպիչը յեղավ Նիժնի-Նովգորոդ քաղաքը:

Նիժնիգորոդի ասեւրական կողմու Մինինը, մի խելացի և յեռանդուն մարդ, կանչ նետեց ուժեր հավաքելու և Մոսկվայի վրա շարժվելու անհրաժեշտության մասին: Ռուսական քաղաքների վաճառականները, մանր առևտրականները և արհեստավորները, յերկրի մնացած ժողովրդի հետ հավասարապես չարաշար տանշվում եյին լիների կամտյականությունից և ճնշումներից: Առևտուրը համարյա գաղաքել եր, արհեստները վեռել եյին, քաղաքների պարհենային մասակարա ըումը ծայրահեղորեն սրվել եր, և Մինինն առաջարկեց ուժեր ու միջոցներ չխնայել՝ հայրենի յերկիրն ու տարերկյա հափշտակիչներից ազատելու համար: Յեթե այդ շարվի, մատնանշում եր նա, ուստ մարդիկ ընդմիջու կման կամայական լին պահների ստրուկները:

Մինինի կոչը ջերմ արձագանք գտավ Նիժնիգորոդյան բնակչության մեջ: Մոսկվացին անձնական գործերը, կազմակերպվեց միջոցների հանգանակություն, վորպեսզի նոր զորք պատրաստվի: Մեծ քանակությամբ կամավորներ մտան նոր աշխար-



Մինին և Պոժարսկի

հազորի մեջ: Մինինը մատնանշեց նոր զորքի առաջնորդը: Նրա կարծիքով՝ այդպիսին կարող եր լինել իշխան Պոժարսկին:

Պոժարսկին թեև իշխանական տոհմից եր, բայց աղքաշտացած նվազատոհմիկ իշխաններից եր: Նա մոսկվյան մեծատոհմիկ ազնվականության կազմին չեր պատկանում: Նկարագրվող ժամանակամիջոցում ազրում եր իր փոքրիկ կալվածքում, Նիժնիի մերձակայքում, այնտեղ բուժելով իր վերքերը, վոր նաստացել եր լիների գեմ կովկիս:

Պոժարսկին համեստ և ազնիվ մարդ եր, ջերմ կերպով սիրում եր իր հայրենիքը և իր արյունը զոհաբերել եր նրան ու տարերկացիներից ազատելու համար: 1611 թվի մարտի 19—20-ի

մոսկովյան ապատամբության որերին, նա, դանվելով առաջին զեմստվային աշխարհագործ շարքերում, առաջին շարքի մարտիկներից մեկն եր մոսկովյան բարիկադների վրա: Յերբ մարտի 19-ին ահազանգ խփեցին և բոլորը վաղեցին դեպի Բելի գորոդ, Պոժարսկին Սրեաենկայում կտրեց լինական ջոկատի ճանապարհը, հետո միանալով թնդանոթաձիգներին, անցավ հարձակման լեճերի դեմ և նրանց քշեց Կիտայ-կորոդ, վորտեղ այդ միջոցին շատերին կտօրինեց:

Գիտենալով, վոր լիները, առաջին պարտությունից հետո ուշքի գալով, նորից հարձակվելու յեն, Պոժարսկին կուրյանկայում կառուցեց բերդակ (ժամանակավոր տիպի փոքր ամրություն), վորտեղ կախվել վորոշեց շարունակել հետևյալ որը: Այդ որը նշանափոր զարձակ համառ պայքարով, վոր մզվեց հարձակման անցած լիների դեմ: Պոժարսկին ծանր վիրավորվեց կովում, և առաջ նրան արարան Տրոիցկի վանքը, իսկ զրանից հետո նրա կալվածքը, վորտեղ և նիմնիգորողիներից հրավեր ստացավ ընդունելու աշխարհազորի հրամանատարությունը: Պոժարսկին համաձայնվեց և իր կողմից առաջարկեց վորպես իրեն ողնական ընտրել կողմա Մինինին:

Նիմեկորողիների կոչը նոր աշխարհապոր հավաքելու մասին կենդանի արձագանգ գտավ բոլոր մերձգոլգյան հյուսիսային քաղաքներում: Աշխարհապորի հավաքը նշանակվեց Յարուալավլում, վորտեղ սկսեցին հավաքվել նոր կազմվող ջոկատները: Զանազան տեղերից այսուհետ եյին գալիս Լյապունովի աշխարհապորի մացորդները, նույնիսկ հետավոր Սմոլենսկից Յարուալավլ յեկավ փոքրաթիվ մի ջոկատ: Պտժարսկի զորքն որեց որ ավելանում եր: Յուրաքանչյուր որ Մոսկվայի պետության բոլոր կողմերն ուղարկվում եյին թղթեր, կոչ անելով միանալ ընդհանուր գործին՝ յերկիրն աղատելու իներից և ուղարկել ուղղմիկ մարզիկ ու զբաժական դանձ ուղղմական մարզկանց ոսմիկի: Համար»:

Ծառայող մարդկանց և կամավորների ջոկատների խմբերը  
գտվիս եյին Յարոսլավլ միանալու աշխարհազորի հետ. առետրա-  
կան մարզիկ բերում եյին զրամական գանձ զորքերին պահելու  
համար, բայց Պոժարսկին և Մինինը Մոսկվայի վրա քայլել չեյին  
վստահանում. Աւդիչում; Պեշիխոնյայում և նրանց գավառակներում  
վայրագություններ եյին գործում լինա-կազմական հրոսակա-

իմքերը, Տիլավինում կանգնած և յին շվեդները: Հարավ՝ չեր կա-  
րելի շարժվել, առանց ապահովելու իր թիկունքը:

Բայց շրջապությունը պահանջում եր այդպիսի շարժում։ Մուկվայում նստած լեներին ոգնության եր շտապում լենական հետման Խողկեվիչը բավորկանաչափ դորջով։ Հարկավոր եր լեներին թույլ չտալ Մուկվայում միանալու։ Այդ պատճառով վուրոշվեց՝ շվեդների հետ բանակցություններ սկսել հաշտության մասին, զիմելով ամեն տեսակ զիջումների, լենակապակական հրոսակների դեմ ուղարկել պատժիչ ջոկատներ, իսկ աջխարհ հազորը շարժել Մուկվայի վրա։

Մոսկվայի մոտ այդ ժամանակ կանգնած եցին Տրուբեցկոյի  
և Զարուցիկի շատ խառը կազմ ունեցող ջոկատները. Տրուբեց-  
կոյը կովում եր լեների գեմ, թեև նրա զորքը հիմնականում կա-  
զակական եր. Զարուցիկին մոլի տուշինոցի յեր, զբաղվում եր կո-  
ղոպուտով. Հարկավոր եր ոգտագործել Տրուբեցկոյին ընդհա-  
նուր պայքարի համար, զգուշանալով նրա մարդկանց անկայու-  
նությունից և վաճառելիությունից, և աղատվել Զարուցիկից:

1612 թվի հուլիսի 26-ին աշխարհազորը դուրս յելավ արշավանքի, վոր ազատի Մոսկվան: Ոգոստոսի 14-ին նա Տրոիցեակարգիկ վանքի (այժմյան Զալյուբկի) մոտ եր, ոգոստոսի 20-ին մոտեցավ Մոսկվային և նրանից հինգ վերստ հեռու բանակ զբաց Յառւզա գետի մոտ: Այստեղից հետախույզներ ուղարկվեցին թշնամու, տեղի և հարեանների մասին տեղեկանալու համար: Հարեաններից ներկա յեր Տրուբեցկոյն իր ջոկատով: Զարուցկին, տեղեկանալով հյուսիսից զեմստվային աշխարհազորի շարժման մասին, հոսացավ զեզի հարավի ապատ տափառտանները:

Տրուբեցիոյը Պոժարսկին առաջարկում եր միանալ մեկ  
զորաբանակ կազմել Բայց Պոժարսկին զրան չհամաձայնվեց:  
Դրա հետեանքով Մոսկվայի մոտ գտնվեցին երկու զորաբանակներ,  
վորոնք գործում եյին մեկ թշնամու ղեմ: Նրանցից մեկը՝ Տրու-  
բեցկոյինը համախմբում եր անկայուն տարրեր, վարոնք մի  
ժամանակ ծառայել եյին ինքնակոչին, լիներին, իսկ այս անգամ  
հավաքվել եյին լիների ղեմ կավելու: Բոլորովին այլ եր Պո-  
ժարսկիի զորքը, այսակի հավաքվել եյին այն տարրերը, վորոնք  
գիտակցում եյին Մոսկվայի պետության ամբողջականության  
ու անկախության համար պայքարելու անհրաժեշտությունը, վո-

բոնք հասկացել եյին հայրենի յերկրի հետագա գոյության անժնարին լինելը, յերբ նրա մեջ եյին գտնվում ոտարերկրյա հափշտակիչները: «Յեթե մենք ուզում ենք ողնել Մոսկվայի պետությանը, — ուսում եր այդ զորքը, — ապա վոչինչ չպիտի խնայենք»: ուստի, այդ զորքի մեջ պնդում եյին թէ՝ «մենք կազմկների հետ միասին յերբեք չենք կանգնի»:

Պոժարսկի և Մինինի զորքի անմիջապես հետևից, ոգոսոստուի 21-ին Վյազմայից Մոսկվային մոտեցավ Խոտկեիչը: Պոժարսկին ամբացած բանակ գրեց Արբատյան զոների մոտ: Խոտկեիչն իր զորաբանակով տեղավորվեց Պոկրոնայա սարի վրա: Նրա հանգարնը կտրելու համար սուսական զորքը դասավորվեց Մոսկվա գետի յերկու ափին: Պոժարսկիի աշխարհազորը՝ ձախ ափին, այժմյան Սմոլենսկի և Կրիմսկի հրապարակների շրջանում, Տրուբեցիոյի աշխարհազորը՝ աջ ափին, այժմյան Կուլտուրայի և հանգստի պարկի մոտ:

Ոգոսոտուի 22-ին Խոտկեիչը Նովոդոլիչի վանքի մոտ գիտն անցավ ու հարձակվեց Պոժարսկիի վրա: Սկսված տաք կոփվն պարող յոթ ժամ անեց՝ առանց նկատելի հաջողություն բերելու թե մեկ և թե մյուս կողմի համար: Բայց ահա լիներն ավելի ու ավելի սկսեցին նեղել ոռուներին: Ռուսական հեծելազորն արդեն տեղ չուներ պատերազմի զաշտում զորաշարժ կատարելու, նա հետևակացավ և հետևակազորի հետ միասին յետ եր մղում լիների զրոհները Զերտոլսկի, այժմյան Կրոպոտկինյան, զոների ուղղությամբ: Դրությունը չափազանց վտանգավոր եր զառնում: Իսկ այդ ժամանակ Մոսկվա գետի մյուս կողմում կանգնած եր Տրուբեցիոյն իր կազմակներով և հանգիստ կերպով զիտում եր այն, ինչ վոր կատարվում եր գետի ձախ ափին: Նրա ջոկատից մի քանիս ները նույնիսկ նախատական խոսքեր եյին բաց թողնում Պոժարսկիի աշխարհազորի հասցեյին: Սակայն, Պոժարսկիի հեծելազորի հինգ հարյուրյակը, վոր նախօրդ որն ուղարկված եյին Տրուբեցիոյին իբրև ոժանգակություն, չկարողացան տանել այդպիսի տեսարանը, գետի միջով լողալով նետվեցին յուրային ողնելու: Նրանց որինակը վարակեց վորոշ կազմակների: Կովին անսպասելիորեն խառնված թարմ ուժերը վճռեցին նրա վախճանը: Խոտկեիչը ջարդվեց և իր զորքի մնացորդներով շտա-

պով անցավ Մոսկվա գետը և նորից կանգնեց իր առաջվա տես դում, Պոկրոնայա սարի վրա:

Խոտկեիչի և Պոժարսկիի զորքերի կովի մոմենտին Կրեմլը գնդապետ Ստրուսը, վորը Գոնսեվսկիի փոխարքն լեհական զորքի դիմավորն իր այնտեղ, աշխատում եր ձեղքելանցներ Խոտկեիչի հետ միանալու համար, բայց կովի յելքից վախենալով, նա հապճեալ վերագարձավ Կրեմլ: Այդ ժամանակից Մոսկվայում գործածական ե զարձել «սուրուսի» («ԵՐԱԿԱՆ»), «սարուսի» («ԵՐԱԿԱՆ»)<sup>1</sup>, ոսր բառը, վոր ցույց է տալիս այն վիճակը, վոր պիտին զգաց այդ փառագանծ պանը, յերբ զնում եր Խոտկեիչի հետ միանալու:

Ոգոսոտուի 23-ին Խոտկեիչը գեպի Կրեմլ գնաց շրջանցիկ մանապարհով, Դոնսկի վանքի վրայով, վորպեսզի Ուզինսկի և Պյատնիցիկի փողոցներով մոտենա Կրեմլին: Պոժարսկին և Պյատնիցիկի փողոցներով մոտենա Կրեմլ այսպես՝ առաջինը Տրուբեցիոյն այդ որը տեղավորվել եյին այսպես՝ Պյատնիցի Պյատնիցիկի փողոցի շրջանում, յերկրորդը Զացեպայի մոտ:

Ոգոսոտուի 24-ին, լուսավեմին, մարտն սկսվեց: Սկզբում նա հաջող եր իների համար: Նրանք նեղում եյին ոռուներին, նա հաջող ու արյունական հեծելազորն արդեն տեղ չուներ պատերազմի զաշտում զորաշարժ կատարելու, նա հետևակացավ և հետևակազորի հետ միասին յետ եր մղում լիների զրոհները Զերտոլսկի, այժմյան Սմոլենսկի զորքում: Այն ժամանակ ընտիր սեղմելով նրանց Մոսկվա գետին: Կազմակները թույլ կերպով սեղմելով նրանց Մոսկվա գետին: Հարվածն այնքան ուժգին հարձակվեց լիների թիկունքի վրա: Հարվածն այնքան ուժգին հարձակվեց լիների թիկունքի վրա: Հարվածն այնքան ուժգին հարձակման անցան Պոժարսկիի զորքերը: Այդ ուսունելով կովի մեջ ձակման մուտքան Պոժարսկիի զորքերը Խոտկեիչի զորքը վերջնականապես մտան զոնի կազմակները: Խոտկեիչի զորքը վերջնականապես մտան զոնի կազմակները: Խոտկեիչի զորքը վերջնականապես մտան զոնի կազմակները: Նորից քաշեցին Պոկրուսկի և նրա խղճուկ մնացորդները նորից քաշեցին Պոկրուսկի լուննայա սարը:

Ոգոսոտուի 25-ին ծագող արեւը լուսավորեց արգեն Խոտկեիչի Մոսկվայից լիակատար նահանջելու պատկերը: Նրա քայլակատար նահանջելու պատկերը Մոժայսկ:

Կրեմլում մնացին մի բուռ լիներ՝ Մարտսի գլխավորությամբ: Կրեմլը և Կրտայ-գորովլը պաշարվեցին չորս կողմից: Բայց կրեմլը և Կրտայ-գորովլը պաշարվեցին չորս կողմից: Սեպտեմբերի 15-ին Պոժարսկիին լիներին առաջարկեց անձնագիրը:

1) Ծրցւութեան այժմյան գործածությամբ նշանակում է ան զգաւ վախենալությունը թարգման:

նատուր լինել խոստանալով նրանց ազատ արձակել գնալու իրենց յերկիրը, բայց լիները հույս դնելով Խողկեհչի ողնության վրա, հրաժարվեցին այդ անել:

Հոկտեմբերի 22-ին կազմակերը գրոհով վերցրին Կիտայ-գորովը, հոկտեմբերի 24-ին պաշարվածները մտան բանակցությունների մեջ, ինդրելով պահպանել իրենց կյանքը. Վերջինը նրանց խոստացվեց:

Հոկտեմբերի 25-ին ոռուսական աշխարհազորը, հավաքվելով Կարսի հրապարակում, հանդիսավոր կերպով մտավ Կրեմլ Սպասակի գոնիքից. Մոսկվան ազատված եր:

Խողկեհչն այդ ժամանակ շարժվում եր Վյազմայի ուղղությամբ, ուր յեկել եր լինական թագավոր Սիգիզմունին իր գորաբանակով: Վերջինը չեր հրաժարվել Մոսկվայի պետությունը նվաճելու իր պլաններից. Վյազմայից Սիգիզմունը շարժվեց գեպի Մոսկվա, բայց Վոլոկլամսկի մոտ վճռական պարտություն կրեց ոռուսական զորքերից, այդ քաղաքի պաշարումը դադարեց- րեց և անփառունակ կերպով վերադարձավ Լենստան:

Դրանից հետո Զարդիկեցին Զարուցկիի գլխավորած տուշինյան զորքերի մնացորդները, և 1612 թվի գեկտեմբերի 21-ին Մոսկվայից գեպի ոռուսական յերկրի բարոր ծայրերը թղթեր ուղարկվեցին՝ ծանուցելով, վոր Մոսկվայի պետությունն ազատվել և ոտարերկրյա լինական արշավանքից:

Լինական ինտերվենցիան Մոսկվայում վերջացավ լիակատար կրախով:

## ՎԵՐԶԱԲԱՆ

Այն հերոսական մոմենտների շարքում, վորոնցով այնպես հարուստ և մեծ ոռու ժողովրդի պատմությունը, նրա պայքարը XVII դարի սկզբում լինական ինտերվենցիայի վեմ ներկայացնում և ամենապայծառ եղերից մեկը:

Խիստ սրված ներքին հակասությունների և ուժեղացած դասակարգային պայքարի ֆոնի վրա առաջացած սոսկալի ավերմունքի տարիներին ոռու ժողովրդը մեծ ուժեր գտավ, վորպեսզի պաշտպանի իր պետության ամբողջականությունը և չժողով ոտարերկրյա հափշտակիչներին ոտարերկրյա ստրկության ծանր լուծը գնելու ոռու ժողովրդի ուսերին:

Հարկ յեղածը տալով ամբողջ ոռու ժողովրդի գիտակցությանն ու բարձր արիությանը, վոր քաջաբար պայքարել եր ազատության և ինքնուրույն գոյության համար, մենք պետք ե առանձին ուշադրությամբ կանգ առնենք յերեք դեմքի գործունեյության վրա, վորոնք տարբեր կիրապով են մարմնավորում ոռու ժողովրդի ազատ ու անկախ գոյություն համար մղած պայքարը մեր պատկիրացման մեջ:

Մոսկվայի պետության մեջ XVII դարի սկզբին այդպիսի աշքի ընկնող գործիչներ եյին՝ իվան Բուտիչ Բոլոտնիկովը, Կողմա Զախարկիչ Մինինը և Դմիտրի Միխայլովիչ Պատարացի:

«Միջթագավորության» խառնակ ժամանակին նախկին ճորտ, հետո վորպես ստրուկ վաճառված և մի շարք տարիներում թյուրքական թիանավերի վրա հյուծիչ աշխատանքից տանջված իվան Բոլոտնիկովը կանգնեց գյուղացիական և կազակական շարժման գլուխ, վորն իրեն նպատակ եր գրել աղատել ճնշված ու շահագործվող ժողովրդին կալվածատիրական, բոյարական և վանքական լծից:

Բոլոտնիկովն այդպիսի աղատության հետևողական մարտիկ եր: Նրա գլխավորած ամբողջ շարժումն ընթանում եր ընչափուրկ մարդկանց ազատության ու յերջանկության համար պայքարի լողունզներով: Զուր չե, վոր բոլոր շահագործողները սարսում եյին Բոլոտնիկովի հենց միայն անունից, զուր չե, վոր «սրբազնազույն» պատրիարք Գերմովենն իր յիշութներում նրա դեմ յելավ և անշուշտ զուր չե, վոր վերջին վճռական ըոպեյին նրան լքեցին Լյապունովն ու Պաշկովն իրենց աղնվական ջուկատներով: Ազնվականներն ուղեկից չեյին «շաղակարաների» և «գողերի» հետ, ինչպես նրանք անվանում եյին Բոլոտնիկովի զորքը, իսկ նրան իրենց շահերի համար ոգտագործելը նրանց ուժերից վեր եր:

«Մենք, բոլշևիկներս, — ասել ե ի, վ, Ստալինը<sup>1</sup>), — միշտ ել հետաքրքրվի ենք պատմական այնպիսի անձնավորություններով, ինչպես Բոլոտնիկովը, Ռազինը, Պուգաչովը և այլն ենք:

1) ի. Ստալին. Զբույց գերմանական զրոդ նմիւ Լյուդվիգի հետ, եջ 8-օ կուսաքատ, 1933:

Մենք այդ ժարդիանց յելույթներում տեսել ենք ճնշված գասակարգերի տարերային զայրույթի, Գեղարվական ճնշման դիմուղացիության տարերային ապստամբության արտացոլումը։ Բոլոտներովի ապստամբությունը ուսւ կյուղացիության պայքարի պատճության ամենանհնատաքը բարակ մեկն է բնդգեմ իր ճնշողների՝ կարգածառերի։

Բննարկվող ժամանակաշրջանի յերկրորդ տչքի ընկնող գործիչը, լինական ինտերլինատների գետ պայքարելու համար զինաված ուժերի կազմակերպիչն եր Կողման Մինինը՝ Մոսկվայի պետության սահմանները ներխուժած ոտարերկրյա հափշտակիչների գետ ոռուս ժողովրդի մեծ շարժման մեջ նիժեկորողցիներն առաջինն եյին, վոր կանգնեցին հայրենի յերկիրը պաշտպանելու համար՝ վոտքի յելնելով Մինինի ազնիվ յետանգով։ «Վոչինչ չինք ինայցի հայրենի յերկիրի փրկության համար, — կոչ եր առում նա իր համաքաղաքացիներին, — գրավ կզնենք կանանց ու յերեխաներին, բայց հայրենիքը կիրկենք»։ Հայրենի յերկիրը փրկելու համար Մինինի պատրաստակամությունն ամեն ինչ զոհաբերելու՝ խորին հարգանքի զգացմունք և առաջացնում դեպի այդ արտասովոր մարդը։

Նրա աղնեվ յեռանցը, փոր ուղղված եր գեպի ոտարքերկրյա հափշտակիչների զիմ մզլող պայքարը, ընդունակ և հուզելու մեջ, XVII դարի սկզբի Մոսկվայի պետության զեմստվային մարզկանց — Հայունսի յերկը համար պանծութիւն մարտիկների հետափոր սերունդներին:

Յեվ, վերջում, մի քանի խոսք Պոժարսկիի մասին։ Մեծ փլուզման ու ցնցումի տարիներին, յերբ իշխաններն ու բոյարները, ձգտելով պահպանել իրենց հարստությունները և պետության մեջ զեկալիքը դասակարգի իրավունքները, պատրաստելին յերգում տալ ու ծառայել ում վոր ասես, միայն թե մեկը նրանց ապահովեր հարստությունները պահպաննեն ու ժողովրդին շահագործելու իրավունքները, իշխան Պոժարսկին ուսւ բնակչության վերնամասի այն շատ փոքրաթիվ ներկայացուցիչներից մեկն եր, վորոնք հավատարիմ մնացին իրենց ժողովրդին։ Նա վոչ մի անգամ չտատանվեց մի կողմից մյուսը, վորպեսզի ինչ գնով ել լինի պահպանի իր ունեցվածքն ու մեծարանքը։ Պոժարսկիի մեջ

անձնականը, յետօկանը վերանում և հետին պլանի վրա յերաշխում ընդհանրականի, ժողովրդականի, պետականի հանգեցք։ Յեթի բոլոտնեկովը մեր պատկերացման մեջ հանդիսանում է ժողովրդական աղատության համարձակ մարտիկի մարմա- ցումը, Մինինը՝ հայրենի յերկրի բարիքի համար անձնազոհու- թյան որինակը, ապա Պոժարսկին ոռուական յերկրի հաստատա- կամ, անհողողող պահակի որբնակն ե, վորն իր արյունով ապա- ցուցել և նվիրվածությունն իր ժողովրդին և լիների գեմ մզված ու- համառ պայքարում կարողացել ե իրեն հանձնված զինված ու- ժերը հմուտ կերպով ղեկավարելով հաղթել թշնամուն։

Հետական պաներին չհաջողվեց ապատազառը  
վրդին և նրա վիճին դնել ստարերկրյա ստրկության լուծը: Նրանք  
դաժան խրատ ստացան: Մուս ժողովուրդը հետագա ժամանա-  
կում ևս զինքը ձեռին բազմիցս քաջարիորեն պաշտպանել և իր  
առաջնորդությունն ու անհախությունը:

յերկըի ամբողջությունն ու առաջարկությունը  
Խորհրդագյին Հանրապետության ժողովուրդների յեղբայրա-  
կան ընկերակցությամբ նա ջախջախեց ներքին հականեղափո-  
խության և ինտերվենտների զորաբանակները քաղաքացիական  
պատերազմի տարիներին։ Նույնպիսի անփառունակ և խայտա-  
պատերազմի տարիներին։ Կամ անփառունակ և խայտա-  
պատերազմի տարիներին։ Անդուրդի ամեն մի թշնամի, վորը կհամարձակ-  
ակ վիճակի կյենթարկվի ամեն մի թշնամի, վորը կհամարձակ-  
ակ վատերազմի առուր բարձրացնել ընդդեմ մեր սոցիալիստական  
կանոնադրության ամբողջ աշխարհի աշխատավորության իսկա-  
կան հայրենիքի։



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր շրջադրությունը	<i>Մոսկվայան պետության մեջ</i>	<b>եջ</b>
XVI դարի վերջում և XVII դարի սկզբին		<b>3</b>
Առաջին լեհական ինտերվենցիան	<i>Մոսկվայան պետության մեջ</i>	
Լեհերի տիրակալությունը	<i>Մոսկվայում:</i> <i>Մոսկվայի բնակչության ապստամբությունը</i> լեհերի գեմ և ինքնակոչի մահը	<b>12</b>
Բոլոտնիկովի գյուղացիական շարժումը		<b>14</b>
Յերկրորդ լեհական ինտերվենցիան		<b>18</b>
Ճակատամարտ	<i>Մոսկվայի տակ</i>	<b>22</b>
Զինված ուժերի կառուցվածքը		<b>25</b>
Լեհական գորքը		<b>25</b>
Մոսկվայան գորքը		<b>27</b>
Տակտիկան		<b>32</b>
Յերրորդ լեհական ինտերվենցիան:	<i>Լեհական թագավոր Սիրոկովությունունիքի գուղմունդի գուրս գալը</i>	<b>34</b>
Ուժերի կազմակերպումը	<i>լեհական ինտերվենցիայի դեմ պայքարելու համար</i>	<b>37</b>
Մոսկվայի գրությունը		<b>38</b>
Կողման Մինիսի կոչը		<b>43</b>
Վերջաբան		<b>50</b>

ՀՀ Ազգային գրադարան



NL0403487

215

ԳԻՆԵ 1 Ռ. 50 գ.